

A454

Վ. Ս. Խ. Հ. ԼՈՒԾՎՈՐԻԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԿՆ ԿՈՄԻՍԱՐԻԵՑ  
ՈԽՈՌՈՄՆԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ

ՖԱԲ.-ԳՈՐԾ. ՅՈԹՆԱՄՅԱ ՅԵՎ ԿՈԼ. ՅԵՐԵՍ. ԴՊՐՈՑՆԵՐԻ  
5, 6 ՅԵՎ 7 ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

... Ծըագրների գիտական մարքսիստական  
մշակումը պետք է ապահովի սիստեմատիկ  
գիտելիքների ճիշտ սահմանված առջանը,

ՀԿԿ (Բ) ԿԿ 1931 թ. 5/IX վորոշումից

91(07)

Ծ-98

կ ր ս ս ս ն ի զ ե ս չ ր ս ս

ԹՐԻՖԼԻՍ

1932 թ.

10 NOV 2011

Վ. Ա. Խ. Հ. ԼՈՒՍՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԻԿՈՒՆ ԿԱՄԻՍԵՐԻԱՆ

ՈՒՍՈՒՄՆԵՐ-ՇԵԹՈՂԱԿՈՆ ՍԵԿՏՈՐ

91(07)

0-92

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

Մ Ր Ա Գ Ի Ր  
Ա Ճ Ի Ա Ր Վ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն

ՏԱՐ. ԳՈՐԾ. ՅՈԹՆԱՄՅԱ ՅԵՎ ԿՈԼ. ՅԵՐԻՏ. ԴՊՐՈՑՆԵՐԻ  
5, 6 ՅԵՎ 7 ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«... Ծրագրների գիտական մարքսիստական  
մշակումը պետք է ապահովի սիստեմատիկ  
գիտելիքների ձեռագործության վրա առնելու»  
ՀԿԿ (Բ) ԿԿ 1931 թ. 5/IX վորոշումից

ՀԿԿ (Բ) ԿԿ ՍԵՊՏ. 5-ի ՎՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
ՊԱՅՄԱՆՆԵՐ ՄԱՐԳԱՐԵՒՄՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վ Ր Ա Ս Ս Ա Ն Ի Ր Գ Ե Ռ Ո Ւ Ց Ա Ն

## ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԽՈՍՔ

I. Աշխարհագրության բովանդակությունը և հիմնական  
խնդիրները

«Մարդկային տարբեր հասարակությունները—ասում ե Մարքսը—իրենց շրջապատող բնության մեջ զանում են արտադրության և գոյության զանազան միջոցներ։ Այստեղից ե առաջանում նրանց արտադրության յեղանակների, կենսաձևերի և արդյունքների (պրոդուկաների) զանազանությունները։ Հենց այդ բնական տարբերային տարբերությունները զանազան հասարակական միավորների շիման գեպքում առաջ են բերում արդյունքների փոխանակություն և դրա հետեւանքով—արդյունքների փոխակերպումն ապրանքների»։

Աշխարհագրությունը, վոր արտացոլում և այդ մոմենտները, կարևոր նշանակություն ե ձեռք բերում դպրոցում, հաշվառման և բնական միջոցների ոգտագործման վրա կառուցվող ժողովրդական տնտեսության զարգացման ներկա ետապում՝ կապված դպրոցի պոլիտեխնիկացիայի հետ։

Կուսակցության կ. կ-ի դպրոցի վերաբերյալ վորոշումը խորշոր նշանակություն ե տալիս աշխարհագրությանը վորպես դըպրոցական ուսումնական առարկայի։ Աշխարհագրությունը դասված ե դպրոցական ուսուցման այն հիմնական առարկաների շարքը, վորոնց հիման վրա «դպրոցը պետք ե պատրաստի կոմմունիստական հասարակության բազմակողմանի զարգացման անդամներ»։

Ֆաբ. գործ. յոթնամյակը և կոլյերի պատրոցը վորպես սոցդաստիարակչական դպրոցների ամբողջ ցանցի ավանդարդ, վորպես մի դպրոց, վոր ուսումնասիրում ե Խ. Ս. Հ. Մ. արտադրության զինավոր ճյուղերը և սոցիալիստական շինարարության հնգամյականը, պետք ե իր աշխարհագրության ծրագրներն ևս կառուցի իր միկրոույնի բնական, տնտեսական և սոցիալ-կենցաղային յերեվույթների տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրության հի-

ՑԵՐԾԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՄԱՐԴԱՐԱՆ և ՅՈՒՆԱՐԱԿԱ Գ. ՌԱՖԻԵՐՅԱՆ

61307 - 67

Ֆ. Ա. Մատոնիկյանի անվան ապարահրատ. «Զարյա» Վուստոկա-ի  
Պատմել 1460. Գլամել 1270 Քանակ 1500-

մունքների վրա (լոկալ մոմենտ), վորպես Խ. Ս. Հ. Մ. և աշխարհի տնտեսության ուսումնասիրության յելակետ (տես Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. լուսժողկոմատի մշակած ֆ. Գ. Յոթ. ծրագրների հրանական դրվագները): Ֆ. Գ. յոթնամյակում և կոլյերիտ դպրոցում անհրաժեշտ ե անցնել Փիլիկական աշխարհագրության դասընթացը և տնտեսական աշխարհագրության լուսրերը:

«Տնտեսական աշխարհագրության առանձին կարևորությունը մեր կրթության սիստեմում», — ասվում է 1928 թ. համառուսական ուսուցչական խորհրդակցության բանաձեռնում, — «առաջին հերթին վորոշվում ե մեր տնտեսության պլանային բնույթով, նաև մեր Միության այն հասուլ դրությունով, վոր նա գտնվում ե թշնամի կապիտալիստական ուղակում: Վերջապես տնտեսաաշխարհագրական մոտեցումը ֆ. Գ. Յոթ. աշխարհագրության ծրագրային աշխատանքներին թերզրվում ե և նրանով, վոր սոցիալիստական շինարարության հաջողությունը պահանջում է տնտեսա-աշխարհագրական թեքում տարածության վերաբերյալ այն խնդիրները վճռելիս, վոր առաջարում ե ժողովրդական տնտեսության վերակառուցումը և վորոնք վորոշվում են մեծ չափով աշխատավոր լայն մասսաների գիտակցական և անմիջական ակտիվությամբ: Տնտեսական աշխարհագրությունն ե, վոր ծանոթացնում ե զանազան յերկրների եկոնոմիկայի հետ, բացատրում նրանց տնտեսական զարգացման տեմպերի և բնույթի զանազանությունը, հանդիսանալով մեր դարաշրջանում քաղ-գրագիտության միանգամայն անհրաժեշտ ելեմենտ, անհրաժեշտ հիմք տալով առանձին յերկրների փոխարարերությունների և համաշխարհային սոցիալիստական հեղափոխության ուղիների կոնկրետ անալիզը համար» (նույն տեղը տես եջ՝ 22—23):

Այսպիսով չի կարելի թերագնահատել տնտեսա-աշխարհագրության նշանակությունը Մարքս-Լենինյան աշխարհայացք ժակելու գործում: Աշխարհագրությունը պոլիտեխնիկական դպրոցում ակտոք ե ոժանդակի կոմունիստական աշխարհայացքի ձեակերպմանը տնտեսությունների փոխանցման և հասարակական զարգացման աշխարհագրական հիմքերի Մարքս-Լենինյան անալիզի միջոցով: Աշխարհագրությունը պետք ե ապահովի սիստեմատիկ աշխարհագրական գիտելիքների և ունակությունների վորոշ ծավալի յուրացումը, այլ և սովորեցնի աշակերտությանը գործադրել այդ գիտելիքներն ու ունանկությունները սոցիալիստական շինարարության պրակտիկայում:

Այս բոլորը պետք ե տալ կոնկրետ նյութի վրա, վերցրած տնտեսական յերկրագիտության բնագավառից, այսինքն աշ-

խարհի բնական և տնտեսա-կուլտուրական գոնալ և ազնոնալ բաժանումների հիման վրա, ամբողջական յերկրագնդի ուսումնասիրությունից անցնելով (5-խումբ), իր հանրապետության և Միության ավելի մանրամասն ուսումնասիրության ըստ ուսունական դիրքի (7-խումբ): Ուսումնասիրելով գոնալ և ազոնալ ֆակտորների դերն ու նշանակությունը մարդկային հասարակությունների տնտեսական գործունեյության մեջ, վորոնք անհավասար կերպով են ցրված ամբողջ յերկրագնդի վրա և տարբեր կուլտուրա ու տարբեր տնտեսական կառուցվածք, քաղաքական կազմ ունեն, մենք մի տերրիտորիայից, մի յերկրից անցնում ենք մյուսին (6-րդ խումբ) հակադրությունների մեթոդով, վորը միանգամայն բավարարում ե վեցերորդ խմբակների աշակերտությանը:

Նյութի այսպիսի բաշխումը աշակերտության համար շատ լավ ու անհրաժեշտ նախադրյալ կղանա խորհրդային սոցիալիստական սիստեմի առավելությունները գիտակցելու, վորի ուսումնասիրությանն աշակերտությունն անցնում ե ուսման 7-րդ տարում:

Բնական արտադրողական ուժերի գոնալ և ազոնալ կարգի ուսումնասիրությունը տրվում ե սերտորեն և անմիջականորեն կապված մարդու տնտեսական գործունեյության հետ և լուսաբանվում ե քաղաքական ձեերի և կապիտալիստական սիստեմի սոց-դասակարգային հակասությունների դերի տեսակետից:

Աշխարհի և ԽՍՀՄ-ի տնտեսական յերկրագիտության բնագավառին վերաբերյալ նյութի մշակման ժամանակ անհրաժեշտ ե չափազանց խնամքով ճշգրիտ վորոշել աշխարհագրական փակտորի դերը հասարակական զարգացման մեջ: Այստեղ պետք ե խուսափել պլուրեմի ճիշտ մարքիստական դրվագից թեքուններ կատարելուց: Մի կողմից չպետք ե ընկնել դեպի այն բուրժուալիստ աշխարհագրագիտական դիրքերը, վորոնց թեորիաները հասարակական զարգացման առանձնահատկությունները բացատրում են բացառապես բնական պայմանների առանձնահատկություններով: Մյուս կողմից պետք ե զգուշանալ յուրատեսակ «ձախլիկ» թեքումից, վորի կողմակիցներն աշխարհագրական միջավայրը վերցնում են իրեւ վոչ եյակտն Փակտոր:

Վորքան ավելի բազմազան են աշխարհագրական միջավայրի հատկությունները, այնքան ավելի նպաստավոր են արտադրողական ուժերի զարգացման համար: Հստ Մարքսի և լող թե հողի բացարձակ պազարերությունը, այլ նրա դիֆերենցիացիան, բնական արդյունքների բազմազանությունն ե կազմում աշխատանքի հասարակական բաժանման հիմունքը, մարդուն բջապա-

տող բնական պայմանների բազմադասությունը դրդում և վերջինիս (մարդուն) բազմազան դարձնել իր սեփական պահանջները, ընդունակությունները, աշխատանքի միջոցները և յեղանակները»:

Մարգսյան այս դրույթը մի ըուլե անգամ չպիտի մոռանա աշխարհագրության դասաստուն:

Աշխարհագրական միջավայրը վոչ թե տնտեսական կառուցվածքը վորոշող պատճառ ե, այլ մարդու տնտեսական գործունեյության վրա այս կամ այն չափով աղողող պայման, կախված արտադրողական ուժերի զարգացման մակարդակից ու բնույթից և արտադրական հարաբերությունների այս կամ այն սիստեմից:

Այսպիսով Փար. գործ յոթնամյակում և կոլյերիտ դպրոցում ամբողջ ուշադրությունը կենտրոնացվում և աշխարհի և ԽՍՀՄ յերկրագիտության դասընթացի վրա: Աշակերտությունը գաղափար և ստանում գլխավոր յերկրների և ժողովուրդների ժամանակակից կյանքի մասին: Աշակերտներն ուսումնասիրում են առանձին յերկրներ, ռայոններ, շրջաններ և այն ամենը, ինչ այնտեղ գոյություն ունի, վորոնց գլխավորում և տնտեսավար մարդը վորաբես բնորոշ ֆիզիկական, բիոլոգիական և սոցիալական գծերի մի միացում, և պարզում են նրանց տեղական կապակցման պատճառները: Յերեխույթների և փաստերի փոխհարաբերության պարզաբանումը, վորոնք ընդհանրապես նկատվում են յերկրագնդի վրա և մասնավորապես նրա այս կամ այն տերրիտորիայում, համարվում ե աշխարհագրության ուսումնասիրության հիմնական խնդիրը: Այդ բոլորի հետևանքով Փար. գործ յոթնամյակի և կոլյերիտ դպրոցի աշակերտությունը պետք է մտածված կերպով ընդգրկի և հասկանաւ համաշխարհային եկոնոմիկայի արմատական անախրոնիզմը, միաժամանակ՝ տնտեսական փոխադրան կախման և քաղաքական անշատման անախրոնիզմը: Աշխարհագրության ուսուցիչը աշխարհագրության դասընթացների մշակման հետևանքով պետք է ուսման 5-րդ, 6-րդ և 7-րդ արդի ներում կարողանա վորոշակի կերպով հասկացողություն տալ յերկու պայքարող սիստեմների՝ կապիտալիստականի և սոցիալիստականի՝ տարրերության ու համաշխարհային սոցիալիստական հեղափոխության ուղիների կոնկրետ անալիզի մասին:

II. Ֆար. Գործ. Յոթ. և Կոլ. Յերիտ. դպրոցների աշխարհագրական նյութի համառոտ բովանդակությունը և ըստ տարիների բաշխման սխման:

1. Առաջին աստիճանի դպրոցների (2-րդ, 3-րդ, 4-րդ խմբ.) աշակերտությունը ստանում է ֆիզիկա-աշխարհագրական ելե-

մենտար գաղափարներ և տարածական կողմորոշում իր ուայնի, շրջանի և հանրապետության տեղական նյութի ուսումնափրությամբ, վորը կարող է բավարար հիմք ծառայել յերկրագիտության և աշխարհագիտության սիստեմատիկ դասընթացն անցնելու համար Փար. գործ. յոթնամյակի և կոլ. յերիտ. դպրոցի ուսման հետևյալ տարիներում:

2. Հինգերորդ տարին (5-րդ խմբ.) պետք է հաշվի առնի չորսամյակում աշակերտության ձեռք բնրած գիտելիքները և տա ֆիզիկական աշխարհագրության ընդհանուր դասընթացն ու յերկրագիտության հիմունքները (յերկրագնդի ընդհանուր տեսությունը), յելակետ ունենալով աշակերտության կոնկրետ դիտողություններն իր շրջապատի վերաբերմամբ: Այս դասընթացը պետք է առ յերկրի կյանքի պատկերը, նրա դեմքի փոխազդեցությունը, ոգնի աշակերտությանը գիտակցելու աշխարհագրական ֆակտորի դերն ու նշանակությունը և մարդու գերը յերկրի գելքի փոփոխության գործում, ոգնի դիալեկտիկական-մատերիալիստական մտածողության մշակմանը, հիմք դնի աշխարհագրության մյուս դասընթացների՝ աշխարհի, վրաստանի և ԽՍՀՄ յերկրագիտության հիմնավոր մշակմանը:

Դիալեկտիկա-մատերիալիստական տեսակետը կոգնի յերկրագնդի ամբողջության և նրա ածանցական ծածկոցների հանրամատչելի և պատկերավոր գիտական գաղափարի մշակմանը: Խոսելով յերկրի սփերաների մասին, վորպես սնող միջավայրի, վորտեղ մարդկությունը կազմակերպում ե իր տնտեսությունը, կարելի յերկրագնդի մակերեսի վրա նայել իրեն մի հսկա արհեստանոցի, վորտեղ մարդկի կանգնած են դազգահների մոտ, կառավարում են մեքենաները, փորում են յերկրի տակ, կարում են լեռները տուննելներով, հսկայական նավերով և եղանակում ովկիանոսները, տեղափոխում են ապրանքներն ողով, պատում են յերկիրը յերկաթուղիների ցանցով, ծովի հատակով անց են կացնում կարելներ և ամենուրեք-սկսած յերկրագնդի աղմկալից կացնում կարելներից և վերջացրած խուլ անկյուններով, իրար են անցնում, հայթայթելով իրենց մի կտոր հացը, հաղթահարելով բնությանը և հարմարեցնելով այդ բնությունն իրենց:

Այսպիսով, յերկրագնդի նման պատկերացման հիման վրա հեղտ կլինի պատկերացնել «մարդկային շերտը», անտրոպոֆիբան սերտ կապված բոլոր գեռ-սփերաների հետ՝ լիստովերայի, վորի մեջ և մտնում մարդկը՝ անցքեր և հանքահորեր փորելով: հիդրոսփերայի՝ վորով նա լողում ե, վորով ոգտվում ե իրեն

սպիտակ ածուխ և շարժիչ ուժ, հարկադրում և ծառայել իրեն և վորեց ձեռք և բերում սննդամթերքներ. ատմոսֆերայի՝ վորով նա շնչում ե ու թռչում և բիոսֆերայի՝ վորպես հիմնական սնող միջավայրի:

Հինգերորդ խմբի դասընթացն ի նկատի ունի վոչ թե բնական աշխարհագրական պայմանների նկարագրական ծանոթությունը, այլ պետք ե ցույց տա այդ պայմաններն իրենց դինամիկայով, փոխադարձ կախումով և սոցիալ-տնտեսական պայմանների հետ ունեցած կապակցությամբ. պետք ե ցույց տալ, վորաշխարհագրական պայմանները հասարակական զարգացման միջավայրն են, վորաշխարհագրական միջավայրի ողափորձման աստիճանը տնտեսության կողմից կախված ե հասարակության արագորդողական ուժերի զարգացման մարկարդակից ու բնույթից և, վերջապես, վորաշխարհագրական միջավայրն ազդում է հասարակական զարգացման վրա վոչ անմիջորեն, այլ անուղղակի կերպով, այսինքն ինչպես ասում ե Ենգելսը. «արտադրական հարաբերությունների միջոցով, վորոնք ծագում են տվյալ տեղում. տվյալ արտադրողական ուժերի հիման վրա, վորոնց զարգացման առաջին պայմանն այդ միջավայրի հատկություններն են»։ Յեզ վերջապես մի նկատողություն ևս. ուսումնասիրելով Փիդիկական աշխարհագրությունը, ուսումնասիրելով ամբողջ յերկերը, մենք պետք ե սակայն աշակերտության ուշադրությունը բենենք իր ուսունի, վրաստանի և ԽՍՀՄ աշխարհագրության վրա (ինչ վոր V խմբի ծրագրներում շարունակ նշվում ե): Այս ճանապարհով մենք կապահովենք թերթիայի և պրակտիկայի կապը և աշխարհագրության ուսումնասիրությունը կծառայեցնենք վրաստանի և ԽՍՀՄ սոցշինարարությանը.

3. Վեցերորդ տարին (6-րդ խմբ.) բնականորեն պետք ե հատկացնել կապիտալիստական, գաղութային և կիսազաղութային աշխարհի ուսումնասիրությանը (յերկրագիտություն): Այստեղ պետք ե աշակերտության առաջ բացվի այն պատկերը, թե ինչպես ե մարդկությունը տարածված յերկրագնդի վրա և ինչպես մարդկային հասարակության առանձին մասերն ապրելով աշխարհագրական այլազան պայմաններում, շնորհիվ տրանսպորտի և հաղորդակցության զանազան միջոցների, գտնվում են սերտ անտեսական համակցության մեջ:

VI տարվա ծրագիրը V խմբի դասընթացի բնական և տրամարանական շարունակությունն ե կազմում, խորացնում և կոնկրետացնում ե փիզիկական աշխարհագրության և աշխարհագրական քարտեզի վերաբերյալ գիտելիքները և ծանոթացնում ե ա-

շակերտությանը կապիտալիստական յերկրների տնտեսական և քաղաքական աշխարհագրության հիմնական տարրերի հետ:

Ուսման 5-րդ տարրում աշակերտների ստեղծած անտրոպոս-ֆերայի պատկերացման փոնի վրա 6-րդ խմբում յերկրների ուսումնասիրությունից ստանում ե լրիվ վորոշակիություն և մեծ հետաքրքրություն, վորովհետեւ այդ ուսումնասիրությունը հնարավորություն ե տալիս պարզելու, թե ինչպիսի քաղաքական վանդակ պետություններից ե բաղկացած անտրոպոսֆերան, ինչպես ե կառուցվում ազգարնակության տնտեսական գործունելությունը ամեն մի պետության սահմաններում, ինչպիսի եներգետիկ միջոցներ ունի տվյալ հողամասը, ինչպես են նրանք դասավորված տերրիտորիայի վրա, ինչպես են անդրադարձել արդյունաբերական կենտրոնների գոյացման, տրանսպորտի զարգացման և այլնի վրա:

Դասընթացի մշակման հետևանքով 6-րդ խմբի աշակերտությունը պարզ գաղաքար պետք ե ստանա կապիտալիստական սիստեմի զանազան քաղաքական ձևերի գերի և սոցիալ-դասակարգային հակասությունների մասին, վորոնք քայլացյում են ժամանակակից իմպերիալիզմի ամբողջ սիստեմը:

Համաշխարհային կապիտալիստական տնտեսության ուսումնասիրությունը պետք ե դրսեվորի իմպերիալիզմի հակասությունները և կապիտալիզմի ներկա ճգնաժամի սրությունը, տակապիտալիստական յերկրների և մանավանդ նրանց եկոնոմիկայի տիպերը: Գաղութային և կիսազաղութային յերկրներից մանրամասնորեն պետք ե կանգ առնել այն յերկրների վրա, ուր առանձնապես սուր կերպով են ընդհարվում իմպերիալիստական հակասությունները և ավելի ցայտուն կերպով ե ցուցադրվում իմպերիալիզմի շահագործող եյությունը: Այս հիման վրա պետք ե ցույց տալ ոսցիալական հեղափոխության նախադրյալների հասունացումը և անխուսափելիությունը:

Այսպիսի ուսումնասիրությունը շատ լավ և անհրաժեշտ նախադրյալ ե, վորպեսզի աշակերտությունը գիտակցի խորհրդային սոցիալիստական սիստեմի առավելությունները, վորի ուսումնասիրությանն անցնելու յերգ տարվա դասընթացում:

4. Ֆաբ. Գործ. Ցոլթ. և Կ. Յ. գպրոցի 7-րդ տարին (7-րդ խմբակ) հատկացվում ե ԽՍՀՄ ուսումնասիրությանը: Դասընթացն սկսվում ե ԽՍՀՄ ընդհանուր տեսությամբ և յերկրի կամ հանրապետության, մեր պայմաններում—վրաստանի, ուսումնասիրությամբ, ընդլայնելով և ընդգրկելով հարևան յերկրները և ամբողջ ԽՍՀՄ ըստ տնտեսության տիպի առանձին հանրապետու-

թյունների և ռայոնների, պարզ ընդգծելով նրանց առանձնաշատկությունները և տեսակարար կշիռը ԽՍՀՄ տնտեսության մեջ, նաև նրանց վիճակը մինչև հեղափոխությունը և ներկայումս, և վերջապես տարբերությունը կապիտալիստական յերկրներից:

Խորհրդային Վրաստանի և ԽՍՀՄ աշխարհագրության դասընթացը պետք է գիտական-աշխարհագրական ըստա տա ԽՍՀՄ սոցիստարարության համար, գիտականորեն հիմնավորի ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության տերիտորիալ տեղաշրջը և ցույց տա, վոր սոցիստական վերակառուցումից հետո մեր տնտեսությունն ստանում է տարածական տեղավորում, վորն ա) առաջ և քաշում հետամնաց ժողովուրդներին և հասցնում առաջավոր ժողովուրդներին, բ) սացիսնալ կերպով և տեղավորում արտադրությունն ի նկատի ունենալով նրա մերձավորությունն եներգիայի և հումքի աղբյուրներին և գ) հնարավորություն և տալիս ավելի արդյունավետ կերպով ոգտագործել բնական հարստություններն արտադրության սոցիստական պայմաններում: Իսկ ընդհանրապես 7-րդ խմբի աշակերտությունը պետք է ուսումնասիրի տնտեսության սոցիստական տեղավորման աշխարհագրությունը, վորպես աշխատանքի աշխարհագրական բաժանման ամենառաջինալ սիստեմ:

Դասընթացի վերջում տրվում է համաշխարհային տնտեսության վերաբերյալ համառոտ ակնարկ, վորպես բնական հանրագումար և յերգակացություն 5-րդ, 6-րդ և 7-րդ խմբակներում մշակած ամբողջ աշխարհագրական նյութի. նշվում է կապիտալիստական յերկրների սիստեմի ժամանակակից համաշխարհային ճշնաժամը, ԽՍՀՄ սոցիստարարության հաջողությունները և կոնկրետ կերպով ընդգծվում է համաշխարհային սոցիստական հեղափոխության ուղին:

Վրաստանի և ԽՍՀՄ մշակումը ուսման յոթերորդ տարում բարեանված լինելով առաջին աստիճանի եկամենտար մշակումից յերկու ուսումնական տարիներով, աշակերտությունը կանցնի մեծ հետաքրքրությամբ և կյուրացնի անհամեմատ լայն չափով, քան ուսման 6-րդ տարում:

Դասընթացի մշակման հետևանքով պետք է աշակերտության գիտակցության մեջ ԽՍՀՄ ամրապնդվի վորպես իր բնության պայմաններով և բնական հարստությունների հնարավորություններով ամենահարուստ յերկիրը, վորպես պլանային սոցիստական շինարարության մեջ լծված բազմաթիվ ազգությունների միանալական մի ընտանիք, ներզրավված սոցիստարարության մեջ լենինյան ազգային քաղաքականության հիման

վրա, վորպես համաշխարհային սոցիստական հեղափոխության հզորագույն հենարան, վորը յերեսում և թեկուղ հենց նրանից, վոր բոլոր յերկրների և ժողովուրդների մնշվածները իրենց դասակարգային հեղափոխական պայքարում հույսները դնում են Խորհուրդների յերկրի վրա:

Այսպես ե ընդհանուր գծերով աշխարհագրության նոր ծրագրների սխեման և համառոտ բովանդակությունը: Նյութի ուսման տարիների այսպիսի դասավորումով հնարավորություն և արվում ուսումնասիրել յերեսույթները վոչ առանձնացած ձեռվայր այլ տրամաբանական հետեղականությամբ, բնության, աշխատանքի և հասարակության պատճառակցական պայմանավորվածությամբ, փոխադարձ լիակատար կապակցությամբ, վերցրած իրենց տարածական դասավորման շրջանում, այսինքն այն շրջանում, վորին սպասարկելու յե կոչված աշխարհագրությունը վորպես գիտություն, վորպես ուսումնական առարկա:

### III. Մեթոդները և մշակման ծեվերը

Աշխարհագրության նյութի մշակման հիմքը պետք է կազմի լաբորատոր հետախուզական մեթոդը: Լաբորատոր մեղոթը փոխում և իր ձևերը համաձայն աշակերտության հասակի և նյութի բնույթի: Այսպես, յեթե չորսամյակի խմբակներում աշխարհագրական նյութը պետք է վերցվի շրջապատող կյանքից եքսկուրսիոն-հետախուզական ճանապարհով և տպա մշակվի լաբորատոր ձեռվայրում և յոթնամյակի խմբակներում նյութը գլխավորապես վերցվում է համապատասխան ձեռնարկներից, գրքերից, ատլասներից, քարտեզներից, տեղեկատու գրքերից և այլն. բայց նրա մշակումը ևս պետք է տարվի լաբորատոր ձեռվայրում և յանկապես համարակալի յեն այստեղ ևս, մանավանդ 7-րդ խմբում և մասամբ 7-րդ խմբում, բայց նյութի ավելի զգալի մասը 5, 6 և 7-րդ խմբում դասավանդելիս համրավոր չե կիրառուել եքսկուրսիոն-հետախուզական մեթոդը:

Ծրագրներում մեթոդները և մշակման ձևերը մանրամասն մատնանշվում են միայն 5-րդ խմբում, իսկ ինչ վերաբերում է 6-րդ ու 7-րդ խմբերին՝ բոլորովին տեղ չի տրվում այն նկատառումով, վոր այդ տարիների դասընթացները հիմնականում ընդհանրապես նույն են լինելու, ինչ վոր 5-րդ խմբում: Մի բան միայն պետք է աչքի առաջ ունենալ, դա հասակն ե և 6-րդ ու առանձնապես 7-րդ խմբի աշակերտության անհամեմատ ավելի լայն զարգացումը, վորն իհարկե հնարավորություն և տալիս

այդ խմբերում ավելի լայն ու խորը ոգտագործել լարորատոր-հետախուզական պարագմունքները: Քարտեղների անալիզ, աշխատանքներ աշխարհագրական տեսրերում, կարևորագույն թվական տվյալների նշանակում և դիմագրամների ու գրաֆիկների միջոցով ձևակերպումներ, քարտեղների գծազրում, խմբերի և առանձին աշխարհաների զեկուցում, հարկ յեղած դեղում եքսկուրսիաներ, — այս բոլորը և նյութի մշակման այլ բազմազան ձևեր կարելի յե ոգտագործել:

Տվյալ զեղքում տրափարետի մասին խոսք անգամ լինել չի կարող. ամեն մի դասատու համակերպելով իր աշխատանքի պայմաններին, պետք ե ոգտվի դասավանդման ակտիվ մեթոդներից: Քարտեղը պետք ե լինի աշխատանքի հիմք, առանց վորի մի քայլ չպետք ե անել:

Աշխարհագրության դասերին քարտեղը պետք ե լինի «ալֆա և ոմեգա», աշխատանքի սկզբ և վերջ: Աշխարհագրության այս կարեռագույն և անհրաժեշտ ձեռնարկը վոչ մի բոպե ուսուցիչը չպետք ե սոսացության տա: Քարտեղը պետք ե գործադրել վոչ միայն նրա համար, վոր աշակետները նրա վրա վրա կարողանան ցույց տալ այս կամ այն տեղը, ինչպես առհասարակ լինում ե, այլ քարտեղի վրա պետք ե կատարվի հետազոտական աշխատանք, կողմորոշում, չափումներ, հաշվումներ, դիտումներ, համեմատություններ, դատողություններ և յեզրակացություններ:

IV. Ֆաբ. Գործ. Յոթ և Կոլ. Յերիտ. դպրոցներ ավարտող աշխարհաների աշխարհագրական տեղեկությունների և ունակությունների մինիմումը:

#### 5-րդ ԽՈՌՄԲ

Ցոթնամյակ ավարտող պետք ե շրջանավիտական նյութի հիման վրա ստանա հասատուուն հիմունքներ ֆիզիկական, մաթեմատիկական և տնտեսական աշխարհագրությունից, այն ե.—

1. Աշխարհագրական հիմնական հասկացողությունների կոնկրետ պատկերացում. ռելյեֆ, բուսահող, կլիմա, բուսականություն, կենդանական աշխարհ և բնակչություն,

2. Այդ գաղափարների պայմանական նշանների հասկանալը հատակագծերում և քարտեղներում:

3. Ֆիզիկական, կլիմայական, բուսահողային, քաղաքական և այլն քարտեղներ կարդալու ունակություն:

4. Գաղափար յերկրագնդի առարկաների և յերկութների փոխարերությունների ժաման:

5. Կոնկրետ հասկացողություն շրջանագիտության հիման վրա լանդշաֆտի մասին վորպես յերկրի տվյալ անկյունի պատճեռականութեան հիմնավորված յերկութների ամբողջության:

#### 6-րդ ԽՈՌՄԲ

6. Գաղափար գլխավոր յերկների և ժողովուրդների ժամանակից կյանքի մասին:

7. Ֆիզիկական, տնտեսական և քաղաքական քարտեղներ կարդալու ունակություն:

8. Ստատիստիկական տվյալների ֆիկսացիայի ունակություն դիագրամների և գրաֆիկների ձևով:

9. Զանազան քարտեղների համեմատության և հակադրման միջոցով կարողանալ կարեռ յեզրափակումներ և հետեւթյուններ անել:

10. Մշակած նյութի հիման վրա համառոտ և սեղմ բնութագրեր կազմելու ունակություն. որինակ՝ յերկրի ռելյեֆը, կիման, բուսականությունը, բնակչությունը, հիմնական զբաղմունքը և այլն:

#### 7-րդ ԽՈՌՄԲ

11. Ունակություն—քարտեղ կարգալու միջոցով կարողանալ պատկերացնել ընդհանուր գծերով ԽՍՀՄ առանձին մասերի լանդշաֆտները:

12. Վրաստանի և ԽՍՀՄ քարտեղների վորոշակի յուրացումը և կողմորոշման ունակություն նրանց միջոցով:

13. Կարողանալ հավաքել հումք, կարողանալ վերլուծել, վերածել սիստեմի և այս կամ այն հետեւթյունները հանել:

14. Կարողանալ ոգտվել համապատասխան ձեռնարկ-գրքերից, ատլասից, քարտեղից, տեղեկատուից և այլն:

Այս և հմտության և ունակությունների այն մինիմումը աշխարհագրության բնագավառից, վոր պետք տանի իր հետ յոթնամյակ ավարտողը:

Սակայն ցանկալի յե, վոր աշխատանքի վերջում ֆաբ. Գործ. Յոթ և Կոլ. Յերիտ. դպրոցներ ավարտողները 5, 6 և 7-րդ խմբերի ծրագրի մշակման հետևանքով՝

ա) Տիբապետեն ամենահամարժեշտ աշխարհագրական նյութին և այդ կարողանան ստանալ քարտեղներից և ուրիշ ձեռնարկներից:

բ) Իմանան աշխարհի բոլոր հայանի յերկրների դասավորումը յերկրագնդի վրա:

գ) Ունական պատկերացում, թիկուզ ընդհանուր գծերով, այդ յերկրների բնական պայմանների և ազգաբնակության ժողովրդական տնտեսության մասին:

դ) Կարողանան ավելի լրիվ պատկերացնել այն յերկրների տնտեսական և քաղաքական առանձնահատկությունները, ինչպիսին են՝ Հ. Ա. Մ. Նահանգները, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Յապոնիան, Իտալիան, Չինաստանը, Հնդկաստանը և այլն:

Ե) Կոնկրետ պատկերացում ստանան միջազգային պրոլետարական հեղափոխության զարգացման ընթացքի, առանձին յերկրների պրոլետարական հեղափոխության զարգացման տարբերության մասին, կախված նրանց կապիտալիստական զարգացման մակարդակի տարրերությունից և ամբողջ նրանց սոցիալ-տնտեսական ստրուկտուրայից և վերջապես

Ղ) Ճեռք բերեն կոնկրետ, սիստեմի վերածված պատկերացում ԽՍՀՄ և նրա զանազան ռայոնների սոցիալիստական շինարարության ուղիների և առանձնահատկությունների, կուսակցության քաղաքականության մասին արտադրողական ուժերի նոր դասավորման բնագավառում, ինդուստրացման, կոլտանտեսությունների և խորհանտեսությունների շինարարության, ըստ առանձին ռայոնների տուանձնահատկությունների մասին, ԽՍՀՄ ելեքտրիֆիկացիայի ծրագրի իրագործման կոնկրետ ուղիների և նոր. Միության ու մասնավորապես Վրաստանի անսպառ հարստությունների մասին:

## Վ ԽՄԲԱԿ

Խր շրջանից վերցրած որինակների միջոցով Փիզիկո-աշխարհագրական հիմնական հասկացողությունների յուրացումը և յերկրագնդի, վորպես մարդու տնտեսական ներգործման ոբյեկտի ընդհանուր տեսությունը

### ՄՇԱԿՄԱՆ ՆՑՈՒԹ

ՍԵՐՈՅԵՐ ՅԵՎ ՄՇԱԿՄԱՆ  
ՅԵՂԱԱՍԱՆԵՐ

1. Հատակագիծ և քարտեզ (կարգած ուայոնի տերրիտորիայի և դիրքի ուսումնասիրության հետ):

Գյուղի և նրա շրջակայքի, ռայոնի կամ քաղաքի հատակագիծը (նայած, թե վորտեղ և գտնվում գալըսցը):

Վրաստանի քարտեզը: Գյուղի ռայոնի կամ քաղաքի տեղը քարտեզի վրա: Վրաստանի սահմանները և մակերեսը: Մասշտաբ քարտեզի և հատակագծի վրա: Հորիզոնն ու նրա կողմերը հատակագծի և քարտեզի վրա:

Հատակագծի և քարտեզի պայմանական նշանները: Քարտեզի և հատակագծի տարրերությունը:

Ֆիզիկական, քաղաքական, կլիմայական, բուսահողային, բուսական և աշխարհի այլ քարտեզներ, նրանց

Պահով կողմորոշել իր բնակավայրը և վրաստանի քարտեզով վորոշել զանական կետերի դրությունը

միջանց նկատմամբ և նրանց հեռավորությունը միմյանցից ըստ մասշտաբի:

Հատակագիծը ճեռքին եքսկուրսիա (որինակ՝ քաղաքում): Եքսկուրսիաների մարդումը գծումը հատակագծի վրա:

Խնդնուրույն նկարել տարրեր մասշտաբներով հատակագծեր, ինարկե, ըսկելով ամենապարզից. քարտեզի ընթերցումն (այս թեման մշակելիս ցանկալի

տարբերություններն ըստ բովանդակության և ըստ պայմանական նշանների:

3. Յերկրագունդ: Յերկրի մակերևույթի կորությունը, Յերկրի զնդանությունը և նրա մեծությունը: Գլոբուս: Յերկրի որական շարժումը, Աստիճանացանց և նրա կառուցումը կիսագնդերի քարտեզի վրա—միջնականներ և գորգանեռներ, աշխարհագրական լայնության և յերկարության վորոշումը:

Ժամացուցային դոտիներ: Յերկրի պտույտն արևի շուրջը: Տարվա յեղանակները: Հինգ դոտիներ (հասարակած, արևադարձներ և բևեռային շըրջաններ):

Յերկրի ծագման գիտական բացարձությունը իրեն հակադրություն աշխարհի ստեղծագործության ըիրթական առասպելներին:

Յերկրը տիեզերքում: Յերկիրը վորպես տիեզերային մարմին — վորպես մի մոլորակ: Յերկրի կառուցվածքը և համառոտ պատմությունը: Մարդու յերկրի մասին ունեցած պատկերացումների զարգացումը:

4. Յերկրագնդի տեսությունը:  
ա) Մայր ցամաքներ, աշխարհամասեր և ովկիտնոսներ—նրանց դասա-

յե կապ հաստատել մաթեմատիկայի հետ),

Լաբորատորային և դասարանային աշխատանք գլոբուսի և կիսագնդերի քարտեզների վրա:

Աստիճանացանցի ոգնությամբ գլոբուսի կամ կիսագնդերի քարտեզի վրա վորոշել այս կամ այն վայրի տեղը:

Տարրեր վայրերի դիրքը վորոշել ըստ լայնության և յերկարության:

Վճռել յերկրագնդի տարրեր վայրերի տվյալ ժամանակի, ժամերի վերաբերյալ խնդիրներ:

Աստիճանացանցի և յերկրի արևի շուրջը պատելու սխեմայի գծագրումը և յերկրի դիրքն արևի նկատմամբ տարվա դանաղան յեղանակներին:

Դասարանական մշակում. պատմվածք:

Լաբորատորային աշխատանքներ: Յերկրագնդի ցամաքի և ջրերի դիրքամը:

Վորոշմը յերկրագնդի վրա ու մեծությունը:

բ) Մայր ցամաքների գծագրությունը: Աշխարհամասերի ափերի գծագրություն. ծովեր, ծոցեր, թերակըղիներ և կղզիներ. պարանոցներ, ջրանցքներ և նեղուցներ:

գ) Ռելյեֆ և նրա տիպիկ ձևերը: Լեռներ, հարթություններ, կիրճեր և լեռնանցքներ (որինակները վերցնել վրաստանում):

Աշխարհի ամենամեծ լեռնային սխեմները (լեռնաշղթաներ և բարձրավանդակներ). ամենամեծ հարթությունները և դաշտավայրերը, մայր ցամաքային ընդհանուր թերվածքները:

Ռելյեֆը քարտեզների վրա:

դ) Գլխավոր գետերը, լճերը և ներքին ծովերը յերկրագնդի վրա ըստ աշխարհամասերի: Վրաստանի և ԽՍՀՄ գետերը — նրանց նշանակությունը և ոգտագործումը:

5. Յերկրի կեղեղի փոփոխությունը: Մտորերկրյա ուժերի ներգործումը և նրանց առաջացրած յերկրաշարժները: Յերկրի կեղեղի բարձրանալը և իջնելը, ճեղքեր, ծալքեր, իջվածքներ և այլն:

Կովկասյան լեռնային (կավկասիոն) ըջանի ծագումը և գոյացումը: Կրոնական ֆանտազիաների ստեղծած տեղական լեզնդաների անհեթեթություններն ու անմտությունները կովկասի լեռնային շրջանի ծագման և գոյացման մասին:

Քարտեզների վրա գտնելու ովկիանոսները, աշխարհամասերը, ծովերը, նեղուցները և ջրանցքները, կղզիները, թերակղզիները և պարանոցները, Այս բոլորը նշանակել համբարտեղներում կամ աշխարհագրական տետրերում:

Քարտեզի վրա գտնելու գլխավոր լեռնաշղթաները, բարձրավանդակները, հարթությունները և նշանակել համբարտեղներում:

Քարտեզների վրա գտնելու գլխավոր գետերը, լճերը և ներքին ծովերը յերկրագնդի վրա գտնելու համապատասխան մասին աշխարհամասերի գետերի առաջանակությունը և ոգտագործումը:

Յանկալի յե առանձին աշխարհամասերի քարտեզների ինքնուրույն գծագրումը, նշանակելով նրանց վրա որինակ՝ ռելյեֆ կամ գետերի, լճերի ու ծովերի ցանցը, ողտակար հանքերի արդյունանաման տեղերը և այլն:

Ճանապարհորդությունների (Կոլումբոսի, Մագելանի, Վասկո-դե-Գամի և ուրիշների) և բևեռային յերկրությունների հետազոտություններում:



Ծովի, հոսող ջրերի, քամու, արեգակնային ջերմության և այլ աշխատանքը և նրանց առաջ բերած փոփոխությունները յերկրի մակերևույթի նկատմամբ (քամհարման և տեղահանժան պրոցեսներ):

զ) Ոգտակար հանքերի (ամենագլխավոր) աշխարհագրությունը, դըրանց արդյունահանությունը և նշանակությունը բնակչության տնտեսական գործունեյության ասպարեզում: Վրաստանի և ԽՍՀՄ ոգտակար հանքերը:

Ցեղանակ և կլիմա: Այն ույոնի, գյուղի կամ քաղաքի կլիման, վորտեղ գտնվում և գոլրոցը:

ա) Միջին ջերմաստիճանը՝ ամսական և տարեկան:

բ) Ամենից հաճախ վոր քամիների ժամանակ և տեղումների լինում մեզ մոտ և վոր քամիներն են մեզ մոտ չորային:

գ) Տարեկան մթնոլորտային տեղումների միջին քանակը և նրանց քաշմումն ըստ տարվա ամիսների:

Ցերկադնդի կեղևի տակերևույթի անհավասար լույս և ջերմություն ստանաւն արելից: Ջերմային գոռիների բաժանումը և նրանց նշանակումը քարտեզների վրա:

Մթնոլորտի և յերկրագնդի մակերևույթի տաքանակը:

Մայր ցամաքների և ովկիանոսների անհավասար տաքանակը:

Քամիներ, քամիների պատճառը, որենքը և տեսակները:

Եքսկուրսիա գեղի ողերութաբանական կայան, յեթե ինարկե ոյդպիսին կա շրջակայքում:

Ցերեխաների կողմից յեղանակի ինքնուրույն գիտողություն, այս թեման մշակելի:

ա) Կազմել յեղանակի որացույց:

բ) արտահայտել որպեսն, գեկադային և ամսական միջին ջերմաստիճանները (կոր գծի ոգնությամբ):

Աշխատանք ջերմաչափով և բարոսետրով: Աշխատանք ամառային և ձմեռային իզոտերներ և իզորաներ ունեցող քարտեզների վրա, յերկրագնդի վրա մթնոլորտային տեղումների քաշման քարտեզներ և

Ծովային հոսանքներ — տաք և ցուրտ, դրանց ծագումը և նշանակությունը կլիմայի համար:

Մթնոլորտային տեղումներ և խոնավություն, մթնոլորտային աեղումների քանակի բաշխումը յերկրագնդի վրա:

Ցերկրագնդի այս կամ այն վայրի կլիմայի կախումն աշխարհագրական լայնությունից, ովկիանոսի և ծովակերևույթից ունեցած բարձրությունից և հեռավորությունից:

Որինակներ վրաստանի կլիմայից՝

ա) Մեր բարձրադիր լեռների և գոզավորությունների կլիման:

բ) Արևմտյան և արևելյան վրաստանի կլիման:

գ) Աև ծովափնյա շրջանի կլիման:

Կլիմայական ֆակտորների (քամու, ջրի՝ «սպիտակ ածուխի», արեգակնային ջերմության՝ «դեղին ածուխի») օգտագործման հնարավորությունները վրաստանի և ԽՍՀՄ առցիալիստական տնտեսության մեջ: Մթնոլորտի ուսումնասիրության նշանակությունն ուղային և ծովային արանսպորտի համար:

6. Բնության պատկերներ (լանդշաֆտներ) և մարդու կյանքը յերկրի վրա (բնության ֆակտորների փոխադարձ կախումը):

Լեռնային լանդշաֆտ — «Կովկասի լեռներում»: Բնության բազմապիսի կությունը: Մեր լեռների բռնական և կենդանական աշխարհը, դրանց բնակչությունը և մարդկանց

վերջապես դասագրքի տեքստի մշակում:

Աշխատանք համը քարտագրական վեհական վրա կամ աշխարհագրական աշխատանքի տետրում:

«Ցեղանակ և կլիմա» թեման մշակելիս չափազանց կարենվոր և կոնտակտ հաստատել Փիզիկայի դասառաջի հետ:

կիշները և նրանց դբաղմունքը (ընդհանուր պատկեր):

Բնական աշխարհագրական շրջաններ՝ յերկրագնդի վրա:  
ա) Սառցային անապատներ.  
բ) Տունդրաներ.  
գ) Բարեխառն գոտու անտառներ.  
դ) Տափաստաններ.

յե) Անապատներ.  
զ) Ցետ-արեալարձային մշտադաւար ծառերի շրջաններ.

ե) Սալաններ և  
ը) Տրոպիկական անտառներ:

Այս բնական շրջանների կլիման, բուսահողը, բուսական և կենդանական աշխարհը և բնակիչների տնտեսական գործունեյությունը. (ընդհանուր բնութագիր):

Հետեւլություն. Կիմայի, բուսահողի, բուսականության և կենդանական աշխարհի և մարդու միջև յեղած կախումը յերկրագնդի վրա. Դրա հետ միասին անհրաժեշտ ե կոնկրետ որինականերով ցույց տալ աշակերտությանը կրասինի արշավը. ճանապարհություններ արեալարձային և բնեույին շրջաններում և այլն, թե ինչպես մարդը պայքարում ե բնության հետ և ինչպես վերջինիս յենթարկում ե իր ազգեցության:

Կյանքին վերաբերյալ հոդվածների ընթերցում:

Կարողանալ քարտեզների վրա ցույց տալ յերկրագնդի լանդշաֆտները:

Ծանոթություն. Այս թեման յերկրագնդի ընդհանուր տեսությունից ամենապատասխանատուն է, վորովհետև նա հիմք ե ծառայում այս դասընթացի մնացած բոլոր աշխատանքներին և դրա համար ել նրա յուրացմանն անհրաժեշտ և առանձին ուշադրություն դարձնել ժամանակի սղության պատճառով ավելի լավ արդյունք ե ստացվում, յերբ այս թեման անցնելիս դիմում են ընթերցանության և միշտ Փիզիկո-աշխարհագրական քարտեզների և ատլասների համեմատությանը, ինչպես որինակ ջերմաստիճանների տվյալներով քարտեղներ, մթնոլորտային տեղումների բաշխման քարտեզներ, ծովային հոսանքների քարտեզներ, յերկրագնդի բուսական լանդշաֆտների դասավորման հատուկ քարտեզներ, նյութն այսպես մշակելիս ցարտուն կերպով հանդիսանալու մեջ այլ գործությունները:

7. Մարդը յերկրի վրա (յերկրագնդի ազգաբնակությունը, կազմած իր ույացնի բնակչության տնտեսական դրություններության ուսումնասիրության հետ):

Իր գյուղի, ուայոնի, քաղաքի, գյուղաստանի ազգաբնակությունը, նրա թիվը, ցեղային և ազգային կազմը.

Կրաղմունքների գլխավոր և հիմնական ճյուղերը: Տնտեսության վիճակը:

Վրաստանի և դպրոցական վայրի տղամարդական մակարդակը և

աշխատանքի արտադրողական մակարդակը. Կուլտուրական հեղափոխության խնդիրները:

Յերկրագնդի ազգաբնակության ընդհանուր թիվը, խտությունը զանազան մասերում. ուսումնական (ցեղային), տոհմային և ազգային առանձնահատկությունները. զանազան ժողովուրդների կուլտուրական մակարդակը և աշխատանքի արտադրողականությունը:

Քարտեղների վրա գտնել ԽՍՀՄ, գլխավոր պետությունները և համաշխարհյային հաղորդակցության մանավարդները:

Ազգային խնդիրներն իմպերիալիստական յերկրներում—շահագործում,

ազգնալ ֆակտորները և նրանց փոխադարձ պայմանավորումը:

Քարտեզագրաֆիկի այս աշխատանքի ժամանակ անհրաժեշտ ե ցուցադրել գանազան տիպի բնական լանդշաֆտների՝ տունդրաների, տայգաների, տափաստանների և այլն նկարներ:

Կազմել ոյլուղի, քաղաքի, ուայոնի, վրաստանի և աշխարհամասերի ազգաբնակության վերաբերյալ դիմագրամներ, ոգտվելով համապատասխան թվական տըկաներից:

Մշակել դասագրքի տեքստը ուսուցչի հետևյալ առաջադրությամբ. «Զանագան ժողովուրդների կուլտուրական մակարդակը և աշխատանքի արտադրողականությունը»: Կարելի յե, նույնիսկ ցանկալի, վար աշակերտությունն այս առաջադրությունը մշակի իրեր ինքնուրույն զեկուցում:

Քարտեղների վրա գտնել ԽՍՀՄ, գլխավոր պետությունն այս առաջադրությունը մշակի իրեր ինքնուրույն զեկուցում:

Քարտեղների վրա գտնել ԽՍՀՄ, գլխավոր պետությունները և համաշխարհյային հաղորդակցության մանավարդները:

ճնշում, աղջային փոքրամասնությունների և գունավոր ժողովուրդների հալածանքը:

Աղջային խնդրի լուծումը ԽՍՀՄ, մասսաների և աշակերտության ինտերնացիոնալ դաստիարակությունը:

Աշխարհի քաղաքական քարտեզը: ԽՍՀՄ և յերկրագնդի մյուս գլխավոր պետությունները:

Պետությունների տնտեսական, կուլտուրական և քաղաքական կապը (ընդհանուր պատկեր):

Համաշխարհային ճանապարհները և նրանց նշանակությունը:

ԽՍՀՄ և կապիտալիստական աշխարհը վորպես յերկու հակադիր սիստեմներ—սոցիալիստական և կապիտալիստական:

Այդ բոլորը նշանակել համը քարտեզների վրա:

## VI ԽՈՒՄԲ

**Ա. ԲԱՐՁՐ ԶԱՐԳԱՑՄԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՅԵՐԿՐՆԵՐ (ԱՇԽԱՐՀԻ ԽՄՊԵՐԻԱԼԻՏՈՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ)**

**1. ՀՅՈՒՄ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅՅԱԼ ՆԱՀԱՆԴՆԵՐ (5 ԺԱՄ)**

ՀԱՄՆ խոշոր տեսակաբար կշիռը համաշխարհային տնտեսության և համաշխարհային քաղաքականության մեջ: Սոցիալգենոկրատական հեքիաթները ՀԱՄՆ բարգավաճման մասին: ՀԱՄՆ վորպես ժամանակակից համաշխարհային տնտեսական ճգնաժամի գլխավոր ոջաղ:

ՀԱՄՆ աշխարհագրական դիրքը—ափերի գծագրությունը, մեծությունը, մակերեսութիւնը կազմությունն ու ձեզ, ափերի գծագրության բնույթը՝ կապված Հյուսիսային Ամերիկայի յերկրաբանական (գեոլոգիական) անցյալի հետ: Նրա բաժանումը՝ բարձրադիր լեռնային Արևելքում և հսկայական հարթություն նրանց միջև, վորը յենթակա յե հյուսիսարևելյան բևեռային և հարավարևելյան մուսոն քամիների աղդեցության: ՀԱՄՆ կլիման՝ կապված մակերեսութիւնը կազմության և շրջապատող ովկիանոսների աղդեցության հետ: Գետավազաններն ու լճավազանները և նրանց նշանակությունը ներքին և արտաքին հաղորդակցության համար: Բուսականության միջորեական (մերիդիոնալ) դասավորությունը:

ՀԱՄՆ կապիտալիստական արտադրության զարգացման արագ տեմպերը բուրժուազիայի համար ամենանպաստավոր սոցիալական պայմաններում (կապիտալիզմի ազատ զարգացմանը խանգարող ֆեոդալական հարաբերությունների մնացորդների բացակայություն—բացառությամբ Հարավի) և բնակչության ան-

ընդհատ ներկուանքի ու նոր բնական հարստությունների նվաճման պայմաններում:

Բնակչության խոռությունն ըստ շրջանների (ռայոնների), կազմած յերկրի բնակեցման պատմության և հիմնական շրջանների տնտեսական զարգացման մակարդակի ու բնույթի հետ:

Արդյունաբերությունն և արդյունաբերական գլխավոր շրջաններն ու կենտրոնները: ՀԱՄՆ արդյունաբերության գլխավոր ճյուղերը՝ քարածուխի, նավթի, յերկաթահանքի, մեքենակառուցման արդյունաբերություն, գրանց կարևորագույն շրջաններն ու կենտրոնները. մանվածային (տեքստիլ) արդյունաբերություն, դրա շրջաններն ու կենտրոնները. մշակող արդյունաբերության փոխադրությունը հարավ վերջին տարիներու, ՀԱՄՆ արդյունաբերության առանձնահատկությունները (մենաշնորհյալ մոնոպոլիստական միավորումների տիրապետություն. արտադրության բարձր տեխնիկական մակարդակ): Արտադրության և բանվորական ուժի շահագործման ամերիկական սպեցիֆիկ մեթոդները: Բանվորական դասակարգի դրությունը,

ՀԱՄՆ գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսության կապիտալիստական բնույթը: ՀԱՄՆ հյուսիս-արևելքի արդյունաբերական շրջանների գյուղատնտեսության բարձր-ինտենսիվ բնույթը: Բամբակի, բրնձի և ծխախոտի արտադրության հարավային շրջան: Հարավը՝ նախկին ստրկատիրական շրջան: Նեղրերի ազտագրվելու ստրկությունից տուանց հողի 1865 թ. պատերազմից հետո և վարձակալ դառնալը, չնայած մինչ այդ վորոշ հողաբաժին ունեցին իրենց նախկին տեղերի մոտ: Նեղր բնակչության թշվառությունը: Նեղրերի հալածանքը ՀԱՄՆ նահանգներում:

Հյուսիսային-ամերիկական պրերիաների հացահատիկային շրջաններ. ցորենի, յեղիպտացորենի (կուկուրուզի), վարսակի շրջաններ: Այդ շրջանների գյուղատնտեսական արդյունաբերությունը (ալուրի, մսի): Այդ արդյունաբերության գլխավոր կենտրոնները: Լիոնային արևմուռքի անասնաբուժական շրջաններ: Այգեգործության խաղաղ-ովկեանյան շրջան:

Բուսահողի գիշատիչ շահագործումը ՀԱՄ նահանգներում և բերքատվության իջնելը վերջին տարիներս: Գյուղատնտեսության մեքենայացման բարձր աստիճանը, վոր բացատրվում և բանվորական ուժի թանգությամբ և պակասությամբ անցյալում:

Գյուղատնտեսության սոցիալական կազմը: Խոշոր, միջակ ու մանր ֆերմերություն և գյուղատնտեսական պրոլետարիատ: Միջակ և մանր ֆերմերության ծանր դրությունը համաշխարհյային

պատերազմից հետո: Հողի և գույքի եժան վաճառք: Ֆերմերների փախուսաը գեղի քաղաք: Գյուղատնտեսական գործազրկության աճումը:

ՀԱՄՆ տրանսպորտը: Տրանսպորտի ուժեղ զարգացումը: Յերկաթուղային տրանսպորտի մրցումը ջրայինի հետ: Ներքին ջրային տրանսպորտի հետամասցությունը, չնայած յերկրի չափացանց նպաստավոր հիղոզրաֆիական պայմաններին: Մեծ լճերի սիստեմը և դրա տրանսպորտային խոշոր դերը: Յերկաթուղային ցանցի խուռախյունը յերկրի զանազան շրջաններում: Տրանսկոնտինտոնալ յերկաթուղային գծեր: Ավտոտրանսպորտի հսկայական դերը ՀԱՄՆ եկոնոմիկայում: ՀԱՄՆ ծովային տրանսպորտը: Պահամայի ջրանցքի նշանակությունը:

ՀԱՄՆ համաշխարհյային շուկայում: ՀԱՄՆ արտաքին առևտուրը: Փոփոխություններ ՀԱՄՆ արտաքին առևտուրի կառուցվածքի մեջ: ՀԱՄՆ վորպես ֆաբրիկատների արտահանող (եքսպորտյոր) և արդյունաբերության համար հումքի ներմուծող (իմպորտյոր). Գյուղատնտեսության արտադրանքի և արդյունաբերական հումքի բաժնի նվազումը արտահանության մեջ: Ներքին շուկայի շրջանակների նեղվածքը ՀԱՄՆ իմպերիալիզմի համար և նրա հարձակումն համաշխարհյային շուկայում. կապիտալի արտահանում, պայքար վաճառքի շուկաների, հումքի ոեսուրսների և աշխարհի վերաբաժանման համար:

Համաշխարհյային տնտեսական ճգնաժամ:

ԽՍՀՄ և ՀԱՄՆ, ՀԱՄՆ կառավարության թշնամական վերաբերմունքը դեպի ԽՍՀՄ: Ամերիկական ինտերվենցիան Հեռավոր Արևելքում քաղաքացիական պատերազմի ժամանակի: ԽՍՀՄ ճանաչելու հարցը: ԽՍՀՄ և ՀԱՄՆ առևտուրը: ՀԱՄՆ տեխնիկական փորձի և տեխնիկական ուժերի ողտագործումը:

## 2. ԱՆԳԼԻԱՆ և ԻՐ ՑԵՎՐՈՊԱԿԱՆ ԳԱՂԹԻԹ ԻՌԼԱՆԴԻԱՆ (5 ժամ)

### Ա ն գ լ ի ա

Անգլիան վորպես համաշխարհյային տնտեսության ամենահին կապիտալիստական յերկիր, վոր հարյուր հիսուն տարվա ընթացքում հանդիսացել ե աշխարհի արդյունաբերական, առևտուրական և ֆինանսական կենտրոն: Անգլիայի մենաշնորհային (մոռնոպոլ) դրության թուլացումը համաշխարհյային շուկայում՝ սկսած 19-րդ դարի յերկրորդ կեսից, Յելլուպայի կապիտալիստական յերկներում, ՀԱՄ Նահանգներում և Յապոնիայում տեղի ունեցած արդյունաբերության արագ զարգացման հետևանքով: Անգլիական արդյունաբերության հետպատերազմյան քարացումն ու

Աշխարհագրական դիրքի և բնական պայմանների համառոտակնարկ: Ճգուղատնական մեջ: Գյուղատնտեսության գերազանցությունն եկոնոմիկայում: Գյուղատնտեսության մասնագիտացումը կաթնատու անասնաբուծության ուղղությամբ: Ազգարային կազմը: Այս յերկրների տրանզիտ նշանակությունը ԽՍՀՄ համար և գլխավոր քաղաք-նավահանգիստները: Այս յերկրների ներգրավումը հակախորհրդային բլոկի մեջ:

### Ռումանիա.

Ռումանիայի տերրիտորիայի ընդլայնումը պատերազմից հետո ի հաշիվ Ավստրո-Վենգրիայի և Բնասարաբիայի բռնագրագումն: Բնական պայմանները՝ ռելյեֆը, հիդրոգրաֆիան, կլիման, բուսահողը և բուսականությունը: Ցերկրի ազգարային բնույթը՝ Նախկին Ավստրո-Վենգրիայի մասերի արդյունաբերական բնույթը: այդ շրջանների հանքային հարստությունները (վոսկի, արծաթ, պղինձ, յերկաթ, ածուխ): Ռումանական նավթը:

Գյուղատնտեսություն: Բոյարական (իշխանական) հողատիրության արիապետություն: Վարձակալաւ-գյուղացի մասսայի ձնշված դրությունը: Հողագործության և անասնաբուծության գլխավոր շրջանները: Գյուղատնտեսության ճգնաժամ:

Ռումանական ֆաշիզմ: Ռումանիայի պատերազմի պատրաստությունը ԽՍՀՄ դեմ և Ֆրանսիայի դերն այդ խնդրում (Կոստանց ուղմական նավահանգստի կառուցում և այլն):

### Չեխո-Սլովակիա—(1 ժամ):

Չեխո-Սլովակիայի կազմակերպումը պատերազմից հետո Նախկին Ավստրո-Վենգրիայի և Գերմանիայի տերրիտորիաներից: Կոնտինենտալ (ցամաքային) աշխարհագրական դիրքը: Բնական պայմանները: Հանքային հարստություններ (քարածուխ, յերկաթ և այլն... դրանց պաշարն ու աշխարհագրությունը): Չեխո-Սլովակիայի արդյունաբերության զարգացման րարձ մակարդակը (մետաղագործական, մեքենա-կառուցողական, ապակեգործական և մանվածային), դրանց շրջաններն ու կենտրոնները: Ճգնաժամը Չեխո-Սլովակիայի արդյունաբերության բոլոր ճյուղերում: Բանվոր դասակարգի դրությունը: Գյուղատնտեսություն—գլխավոր ճյուղերն ու շրջանները: Գյուղացիության դրությունը:

Չեխո-Սլովակիայի պատրաստությունը պատերազմի ԽՍՀՄ դեմ և նրա սպասարկումը Լեհաստանին ու Ռումանիային ուղղ-

մանյութերով: ԽՍՀՄ տնտեսական կապերը Չեխո-Սլովակիայի հետ:

Ավստրիա, Վենգրիա և Շվեյցարիա (1 ժամ)

(Մշակել կարտոգրաՓիկ ձևով)

### 3. ԲԱԼՔԱՆՅԱՆ ԹԵՐԱԿՂՋԻ (2 ժամ):

Թերակղու աշխարհագրական դիրքը կարևորագույն առևտրական և ռազմագիտական (արրատեգիտական) ճանապարհների վրա և իմակերպարական յերկրների պայքարը տնտեսական և քաղաքական գերակշռության համար այդ թերակղում:

Բաւեանյան թերակղու բնույթյան—ուլյեփի, ծովեղրների, շրջապատող ծովերի, կլիմայի, հիմունքագրաՓիայի, բուսահողի և բուսական աշխարհի առանձնահատկությունները:

Արդյունաբերության թույլ զարգացումը Բալքանյան թերակղու յերկրներում և դրանց գյուղատնտեսական բնույթը: Բալքանյան թերակղու մինչպատերազմյան քաղաքական քարաեղբայրության կապված կազմը: Ազգային հարցի սուր բնույթը՝ կապված զանազան յերկրների Բալքանյան թերակղուն իրենց յենթարկելու, Բալքանյան յերկրների հակասություններն ոգտագործելու մշտական ձգտման հետ: Բալքանյան քաղաքական քարտեղի հետպատերազմյան վերածնումը:

Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկա պայքարը գերակշռության համար Բալքանյան թերակղում:

### 4. ԻՄՊԱՆԻԱ և ՓՈՐԹՈՒԴԱԼԻԱ (2 ժամ):

Աշխարհագրական դիրքը և բնական պայմանները: Ռելյեփի, կլիմայի, հիդրոգրաՓիայի, բուսահողի և բուսականության առանձնահատկությունները: Պգակար հանքերի պակասությունը: Տընտեսական ծայր հետամնացությունը ներկայում: Արդյունաբերության թույլ զարգացումը և գյուղատնտեսության գերացանցությունը: Բնակչությունը և նրա խոտությունը: Գլխավոր քաղաքները: Ներքին հաղորդակցության ճանապարհների թույլ զարգացումը: Տնտեսական կախումն ոտար կապիտալից: Իսպանիայի և Փորթուգալիայի բնական ռեսուրսների շահագործումն ոտար կապիտալի կողմից: Գյուղատնտեսություն: Գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը և դրանց աշխարհագրությունը: Աղնվական-կալվածատիրական և յեկեղեցական հողատիրության տիրապետությունը: Գյուղացիության կիսաճորատային դրությունը: Հեղափոխական շարժումն իսպանիայում և Փորթուգա-

լիայում: Իսպանական հեղափոխությունը: Իսպանիայի և Փորբուգտիայի գաղութային կալվածները և նրանց նշանակությունն իսպանիայի և Փորբուգտալիայի համար:

#### Դ. ՎՈԶ ԿԱՐԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՌՎ ԸՆԹԱՑՈՂ ՅԵՐԿԻ ՆԵՐ

Մոնղոլական և Տուվինյան ժողովրդական հանրապետություններ (2 ժամ):

Այդ հանրապետությունների տերը բարիան կարագիրը աշխարհագործությունների համառոտ նկարագիրը: Նրանց մինչհեղափոխական անցյալը: Սոցիալ-տնտեսական կառուցվածքի ծայր հետամասացությունը և այդ կառուցվածքի ինտենսիվ վերակառուցումը սոցիալիզմի ուղղությամբ ներկայումս: Սոցիալիստական շինարարության հնգամյա պլանը Մոնղոլական ժողովրդական հանրապետության մեջ: Բնակչությունը և նրա զբաղմունքները: Արդյունաբերության թույլ զարգացումը: Քոչվորական անասնաբուծության գերակռությունը: Գլխավոր քաղաքային կենտրոնները և հաղորդակցության ճանապարհները: Այդ հանրապետությունների կազմ ԽՍՀՄ հեղթարական ոգնությունը նրանց տնտեսական և կուլտուրական վերելքի գործում:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԳՆԱԺԱՄԸ, ՅԵՐԿՈՒ ՍԻՄԵՑՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ (4 ժամ):

Հետպատերագմյան դարաշրջանը վորպես կապիտալիզմի մայրամուտի դարաշրջան:

Պայքարի սրումը համաշխարհային առաջնության (հեգեմոնիայի) և պայքար աշխարհի նոր վերաբաժանման համար: ՀԱՄՆ և Անգլիայի պայքարը վորպես հակասությունների հիմնական առանցք իմակարինիզմի բանակում: ՀԱՄՆ հարձակումը Անգլիայի տնտեսական և քաղաքական դիրքերի վրա յերկրագնդի բոլոր անլյուններում:

Հակասությունների հիմնական հանգույցներն իմակարիալիստների բանակում. ա) Անգլիայի, Ֆրանսիայի և ՀԱՄՆ պայքարն առաջնության (հեգեմոնիայի) համար Յելքոպայում, բ) Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի պայքարն առաջնության համար Աֆրիկայում, Բալքանյան թերակղզում և առաջավոր Ասիայում: Մեջնորդական ծովային պլոտեմ. զ) Անգլիայի,

Յապոնիայի, ՀԱՄՆ և Ֆրանսիայի պայքարն առաջնության համար Հարավային Ասիայում և Հեռավոր Արևելքում: Խաղաղ ովկիանյան պլոտեմ: դ) ՀԱՄՆ և Անգլիայի պայքարն Ամերիկան մայր ցամաքի համար (Կանադա և Լատինական Ամերիկա):

Կապիտալիզմի հակասությունների սրումը գաղություններում և կիսազարդություններում (Զինատան, Հնդկաստան, Ինդոնեզիա, աֆրիկական, արաբական յերկրներ և այլն): Գաղութային հեղափոխական շարժման ամր: Իմակարիալիստների առջև ծառացող ավելի և ավելի մեծ անհրաժեշտությունը սվինների ուժով յենթարկված պահելու գաղութային և կիսազարդութային ժողովուրդներին:

Աշխատանքի և կապիտալի հակասությունների սրումը կապիտալիստական յերկրներում: Կապիտալի հարձակումը բանվոր դասակարգի վրա հետպատերազմյան ճնաժամի շերտից յելք գտնելու նպատակով (ռացիոնալիզացիա, աշխատավարձի իջեցում, աշխատանքային որվա յերկարացում, աշխատանքի ինտենսիվության ուժեղացում, գործազրկություն) և բանվոր դասակարգի հեղափոխականացումը: Բանվոր դասակարգին փաշիստական դիկտատուրայի մեթոդներով յենթարկված պահելու ավելի և ավելի մեծ անհրաժեշտությունը կապիտալիստական յերկրներում:

Ավելի և ավելի սրվոր հակասությունները ԽՍՀՄ և ամբողջ կտպիտալիստական աշխարհի միջև: Յերկու սիստեմների՝ կապիտալիստական և սոցիալիստական՝ պայքարը: Կապիտալիզմի հարձակելու սուր բնույթ ստացող վտանգը: ԽՍՀՄ վրա հարձակելու սուր բնույթ ստացող վտանգը: ԽՍՀՄ անընդհատ պրովակացիայի յենթարկման քաղաքականությունը կապիտալիստական բոլոր յերկրների կողմից:

1929—30 թ. համաշխարհային տնտեսական ճնաժամը, վորը կապիտալիզմի հետպատերազմյան բոլոր հակասություններին չափազանց սուր բնույթ և տվել: Համաշխարհային պատերազմի և ԽՍՀՄ՝ վրա հարձակելու վտանգի ել ավելի սրումը: Պրոլետարական հեղափոխության նախադրյալների արագ հասունացումը շարք յերկրներում: Նրանց կոմկուսների պայքարը ճնաժամից հեղափոխական յելք գտնելու համար:

## VII ԽՈՒՄԲ

ԽՍՀՄ ՎՈՐՈՒՍ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՅԵՐԿԻՐ ՅԵՎ ՀԱ-  
ՍԱՇԽԱՐՁԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՅԱՆ  
ՀԵՆԱՐԱՆ

ԽՈՐՀԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻՈՒԹՅՈՒՆ

(Ընդհանուր ֆիզիկա-աշխատիագրական տեսություն)

Աշխարհագրական դիրքը: Նրա թերությունները — (հեռավո-  
րություն համաշխարհային ճանապարհներից և համաշխարհային  
շուկաներից) և առավելությունները (նրա դիրքը համաշխարհա-  
յին հեղափոխական յերկու գլխավոր ոջախների — Արևմուտքի  
պրոլետարիատի և Արևելքի գաղութային աշխատավոր մասնանե-  
րի միջև): Նրա դիրքը ծովի նկատմամբ: Ցամաքային և ծովային  
սահմանները. նրանց տնտեսական և սաղմական նշանակությու-  
նը: ԽՍՀՄ ափերը վողողող ծովերի բնույթը:

Տերբիառիայի մեծությունը: Տերբիառիայի մեծության  
նշանակությունը տնտեսական և սաղմական տեսակետից: Ուելյեֆ  
և նրա առանձնահատկությունները ԽՍՀՄ զանազան մասերում:

Ուելյեֆի ազդեցությունը ԽՍՀՄ տնտեսական գործունեյու-  
թյան վրա: ԽՍՀՄ ուելյեֆի նշանակությունը սաղմական տեսա-  
կետից:

Կիման, նրա առանձնահատկությունները և ազդեցությունը  
տնտեսության վրա:

Գետերն ու լճերը և նրանց տնտեսական նշանակությունը:  
Ջրանցքների սիստեմը: Բուսահողեր և բուսական աշխարհ: Հիմ-  
նական դոնալ լանդշաֆտներ:

Ոգտակար հանքերի դասավորումը:

Բնակիչները, նրանց քանակը: Բնակիչների խտությունը  
Միության զանազան մասերում: ԽՍՀՄ բնակիչների քանակի  
նշանակությունը տնտեսական զարգացման և յերկրի պաշտպա-  
նության համար:

Բնակչության խտությունն իրեն տնտեսական աշխարհա-  
գրական ցուցանիշ: ԽՍՀՄ ազգաբնակության բնական շարժումը:  
Բնակչության ազգային, պրոֆեսիոնալ և զասակարգային կազմը:  
Կուլտուրական արագ աճումը: Կուսակցության քաղաքականու-  
թյունն ազգային խնդրում:

ԽՍՀՄ կազմը: Դաշնակից ու ավտոնոմ հանրապետություն-  
ները և մարզերը: Պետական կառուցվածքը: ԽՍՀՄ ռայոնացումը:  
Բայոնների սամազդիտացումը:

ԽՍՀՄ տեսությունն ըստ հանրապետությունների և  
շրջանների.

Ա. Անդրկովկաս: Նրա ընդհանուր ֆիզիկա-աշխարհագրա-  
կան տեսությունը: Կովկասյան պարանոցը: Անդրկովկասի մակե-  
րևույթը, սահմանները և բաղկացուցիչ մասերը: Սահմանների  
ռազմական և տնտեսական նշանակությունը: Բնակիչները — քա-  
նակը, խտությունը, ազգային և պրոֆեսիոնալ կազմը: Անդր-  
կովկասի կառավարությունը: Ուելյեֆի հիմնական յենթաբաժա-  
նումները: Բնական և տնտեսական լանդշաֆտի բազմապիսիու-  
թյունը և նրա պատճառները:

Հիմնական բնական մարզեր՝ Սև ծովափնյա յեղերք, լեռ-  
նա-անտառային մարզեր, Ալպյան մարգագետինների մարզեր.  
Արևելյան և Հարավային անդրկովկասյան տափաստաններ. Թա-  
լիշի մարզ:

Սև և Կասպից ծովերը. սրանց ֆիզիկա-աշխարհագրական և  
տնտեսական նշանակությունը:

### ՎՐԱՍՏԱՆԻ ՍԽՀ

ա) Բնական արտադրողական ուժերը և բնակչությունը:  
Դիրքը, տարածությունը և սահմանները: Կազմը և կառավարու-  
թյունը: Վարչական բաժանումը:

Ուելյեֆի կառուցվածքը: Ոգտակար հանքեր: Հանքային ջրեր  
և բուժիչ ցեխեր: Վրաստանի ՍԽՀ ջրեր՝ ծովը, գետերը, լճերը,  
ճահիճները: Սպիտակ ածուխ:

Վրաստանի բնական շրջանները: Կիմայի, բուսահողի, բու-  
սական և կենդանական աշխարհի առանձնահատկությունները և  
յուրաքանչյուր շրջանի տնտեսական հնարավորությունները:

Վրաստանի սահմանների, դիրքի և ուելյեֆի բնութագիրը  
ուղղմական տեսակետից:

ՎՍԽՀ բնակչությունը: Քանակը, խտությունը, պրոֆեսիո-  
նալ-ազգային կազմը: Ազգությունների վիճակը Վրաստանում  
ցարիզմի ժամանակ և մենափելների իշխանության որոք: Խորհ.

իշխանության ազգային քաղաքականությունը՝ Բնակիչների կուլտուրական մակարդակը:

Զանազան ազգային խմբավորումների կենցաղը: Աղջային կուլտուրայի՝ ձևով ազգային, բովանդակությամբ՝ պրոլետարական, ինտերնացիոնալ, զարգացումը: Ազգարնակության հետամնաց խըմբակների կուլտուրական վերելքը: Քաղ-լուս, աշխատանքն ազգաբնակության մեջ, պայքար կենցաղային մասցըների և կրոնի ազգեցության գեմ: Կուլտուրական հեղափոխության խնդիրները: ՎՍԽՀ I և II կուլտուրական հնգամյակը: Բնակչության առողջապահությունը: Վրաստանի կուրորտները:

բ) ՎՍԽՀ ժողովրդական տնտեսությունը: Վրաստանի ժողովրդական տնտեսության հետամնացության՝ պատճառն անցյալում (ցարիզմի գաղութային քաղաքականությունը): Վրաստանը համաշխարհային իմպերիալիզմի գաղութ մենշևիկների տիրապետության որոք: Վրաստանի արտադրողական ուժերի աղատազրումը խորհրդայնացումից հետո: ՎՍԽՀ ժողովրդական տնտեսության նվաճումները սոցիալիստական ռեկոնստրուկտիվ բնագավառում:

ՎՍԽՀ ինդուստրիալիզացիայի նվաճումները: Եներգետիկ-հումուլիտի միջոցների ոգտագործումը: Սպիտակ ածուխ և հիգրոկայանների ցանցի լայնացումը: Մարդանեց, քարածուխ, նավթ, յերկաթ, պղինձ, բարիտ, դիատոմիտ, լիտոպրաֆիական քար, մարմար, բուսական կավեր, ֆլորիդին, անդեղիտ, ցեմենտ:

ՎՍԽՀ անտառային հարստությունները և անտառային տընտեսություն: Գյուղատնտեսական արդյունքների վերամշակումը: Մրգերի և պահածոների արդյունաբերություն: Ճակնդեղաշաքարային արդյունաբերության ստեղծումը: Փայտամշակման և քիմիական արդյունաբերության զարգացումը: Ծանր ինդուստրիայի զարգացումը: Նոր ֆարբիկա-գործարանների կառուցումը: Գլխավոր ինդուստրիալ կենտրոնները և ձեռնարկությունները:

ՎՍԽՀ հնգամյակի իրականացումը և հանրապետության տնտեսական գեմքի փոփոխումը—ազգաբար-ինդուստրիալ յերկրի վերածվելը:

Սոցիալիստական ձերի հաղթանակը և մասնավոր կապիտալի գուրս մղվելը խոշոր արդյունաբերությունից: ՎՍԽՀ արդյունաբերության ուաղմականացման հնարավորությունները:

ՎՍԽՀ գյուղատնտեսության կոլեկտիվացման հաջողությունները: Վրաստանի գյուղատնտեսության կազմակերպության ու տեխնիկայի պրիմերիվ վիճակը մինչև խորհրդայնացումը: Հողատիրապետություն և հողոգտագործման ձերը ցարիզմի ժա-

մանակ: Ֆեոդալական փոխարաբերությունների պահպանումը մենշևիկների որոք: Ազրարային հեղափոխությունը խորհիշխանության որոք: Հիմնական հողային որենքները և հողաշխարարություն:

ՎՍԽՀ գյուղատնտեսության նվաճումները բարձր տեխնիկայի կոլեկտիվացման հիման վրա: Տրակարի կիրառումը հողամշակման գործում: Զբարաշխում, իրբիզացիոն կառուցումներ: Անասնաբուծության, մեղվարներության, շերամապահության ռացիոնալիզացիան:

Կոլտնտեսությունների աճումը՝ ՄՏԿ (մեքենա-տրակտորային կայան), խորհտնտեսություններ:

Վրաստանի գյուղատնտեսության ճյուղերն ու ռայոնները: ՎՍԽՀ գյուղատնտեսության հնգամյակի իրականացումը:

Գյուղատնտեսության վերակառուցումը՝ տարածության ընդարձակման և տեխնիկական կուլտուրաների ինտեսիվացման ուղղությամբ:

Բամբակ, կանեփ, ռամի, իտալական կտվահատ, սոյա, թեյ, ծխախոտ: Վրաստանի գերը ԽՍՀՄ բամբակի անկախության պրոբլեմում:

Խաղողագործության ու գինեգործության, պտղաբուծության և բանջարաբուծության զարգացումը: Գյուղատնտեսության գերը ԽՍՀՄ արդյունաբերությանը հումք մատակարարելու և արտաքին եքսպորտի գործում:

Վրաստանի տնայնագործական արդյունաբերությունը: Տեսակաները և նրանց տերրիտորիալ բաժանումը: Ավելի արժեքավոր ձյուղերը: Վրաստանի տնայնագործության կոլեկտիվացմանը:

Առևվտուր, արանսավորտ և ժողկապ: ՎՍԽՀ ներքին առևտուրը: Ասրանքները և շուկաները: Պետական առևտուրը և նրա ակադեմիկալումը: Սպառողական կոռպերացիան և նրա վերակառուցումը. ճյուղային միավորումներ: Բանվորության մատակարարման կազմակերպումը:

Սպառողական կոռպերացիայի գերը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում:

Մասնավոր կապիտալի գուրս մղումը: Վրաստանի մասնակցությունը ԽՍՀՄ ներքին առևտուրին: Առևտրական կենտրոններ:

Վրաստանի մասնակցությունը ԽՍՀՄ արտաքին առևտրին:

Վրաստանի նավահանգստները:

Տրանսպորտ: Յերկաթուղիներ և խճռվիներ: Շովային և ուղային ճանապարհներ: Վրաստանի տրանսպորտը հնգամյակում: Ժողովականի վրաստանի Ռազդի փիկացիան: ՎԱԽՀ դերը ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության գործում:

### ՎԱԽՀ-ԱՆ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՏՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ:

Անարիստանի ավտոնոմ ՍԽՀ: Տեղը, սահմանները, տարածությունը: Մակերսի, կիմայի, բուսահողի, բուսական ծածկոցի առանձնահատկությունները: Ուղղաձիգ զոնալ բաժանումները: Բնակչությունը: Բաթումը և նրա տնտեսական նշանակությունը վրաղիս նավահանգիստ և ինդուստրիալ կենտրոն:

Նավթաթոր գործարան: Ելեկտրիֆիկացիա: Հատուկ յենթաքաղաքարձային կուլտուրաների (թեյ, կիտրոնային կուլտուրաներ, բամբակ) զարգացումը ինտենսիվացման և կոլեկտիվացման հիման վրա:

Անարիստանի տնտեսական և կուլտուրական աճումը խորհրդական իշխանության որոք: Անարիստանի տերրիտորիայի ուղմական նշանակությունը: Զարգացման հեռանկարները:

Արխազիայի ԽՍՀ-Նրա տեղը, սահմանները և տարածությունը: Բնության առանձնահատկությունները—ծովափնյա և լեռնային մասերը: Լանջափափի բազմապիսիությունը և նրանց սուրբաժիգ բաժանումը: Անտառային հարստությունները: Բնակչություն: Փողովրդական տնտեսության առանձնահատկությունները: Մերձարեալարձային կուլտուրաներ (ծխախոտ), հատիկային կուլտուրաներ. խաղող, անասնաբուծություն: Կոլեկտիվացման հաջողությունները:

Քարածուխ (Ծղվարչելի և Բղիրի ուայոնները):

Սուխումի իրեկ նավահանգիստ և կուրորտ: Արդյունաբերության զարգացումը: Հազորդակցության ճանապարհներ. լեռնանցքային ճանապարհներ: Ան-ծովափնյա յերկաթուղու կառուցումը: Արխազիայի տերրիտորիայի ուղմական նշանակությունը: Արխազիայի տնտեսական և կուլտուրական աճումը խորհրդային իշխանության որոք: Զարգացման հեռանկարները:

Հարավ. Ոսեթի ավտոնոմ շրջան: Տեղը, սահմանները և տարածությունը: Բնության առանձնահատկությունները: Բնակչությունը: Յերկրագործությունը և անասնապահությունը վորպես ժողովրդական տնտեսության գերակշռող ճյուղը: Այգեգործություն և տնայնագործական արդյունաբերություն. (մասուդ, յափնջի):

Ստալինիրի քաղաքը (ն. Ցիխնվալ) և գլխավոր գյուղերը: Գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Խոշոր արդյունաբերության զարգացման սկիզբը: Ճանապարհները: Հարավ-Ռսէթի տնտեսական և կուլտուրական աճումը խորհրդային իշխանության որոք: Զարգացման հեռանկարները.

### ՎԱԽՀ ԴԱՇՆԱԿԻՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ:

ա) Աղրբեջանի ԽՍՀ. սահմանները, տերրիտորիան: Կազմը և կառավարությունը: Խնքնավար Նախջեանի ԽՍՀ-նը և Լեռնային Ղարաբաղի ինքնավար շրջանը: Կասպից ծովի նշանակությունը: Մակերեսի, կիմայի, բուսահողի, բուսական և կենդանական աշխարհի առանձնահատկությունները: Գետերը և լճերը: Ոգտակար հանքեր. (Բաղվի նավթի համաշխարհային նշանակությունը: Գաշքեսանի մագնիթային յերկաթ, պղինձ): Բնակչությունը: Աղրբեջանի կուլտուրական աճումը խորհրդական որոք: Ժողովրդական տնտեսություն: Գյուղատնտեսություն կողմանի վարչությունը: Աղրբեջանի պրոբլեմը: Այգեգործություն, բանջարաբուծություն անասնաբուծություն:

Խոշոր արդյունաբերություն և ինդուստրացման զարգացումը:

Բագուն վորպես ԽՍՀՄ խոշոր ինդուստրիալ կենտրոն: Բագ, գի պրոլետարիատի գերը հեղափոխության մեջ: Գանձակի, վարպետական կուլտուրական և կուլտուրական կենտրոնի աճումը: Ելեկտրիֆիկացիա: Քաղաքներ: Տնայնագործական արդյունաբերություն:

Աղրբեջանի ժող.-տնտեսության հնգամյա պլանը:

բ) Հայաստանի ԽՍՀ: Սահմանները: Տերրիտորիան. Կառավարությունը: Դիրքի առանձնահատկությունները—դեպի ծովափառությունը: Մակերեսությը: Գետերը: Սևանա լիճը-յելքի բացակայությունը: Հայաստանի խոշոր հիդրո-էներգետիվ և նշանակությունը. Հայաստանի խոշոր հիդրո-էներգետիվ վագները: Կիման, բուսական և կենդանական աշխարհը: Ոգտակար հանքեր (պղինձ, առուֆ, պեմզա): Բնակչությունը:

Հայաստանի պատմական անցյալը:

Ժողովրդական տնտեսության առանձնահատկությունները: Աղրյունաբերության արագ աճումը և ինդուստրացման հաջողությունները խորհրդական որոք: Հիդրո-էլեկտրական կայաններ: Հաղորդակցության ճանապարհներ: Քաղաքներ: Ժողովրդական անապարհներ: Քաղաքներ: Ժողովրդակցության ճանապարհներ:

Յեզրափակող ակնարկ Անդրկովկասի ժող.-տնտեսության վրա. Անդրկովկասի ազգությունների վիճակը և ազգային խըռ-ըռությունը ցարիզմի և բուրժուական-դեմոկրատիկ կառավարու-թյունների որոք: Խորհ.-իշխանության որոք ազգությունների տնտեսական և կուլտուրական սերտ աշխատակցությունը, վոր-պես Անդրկովկասի տնտեսության բուռն զարգացման ֆակտոր:

Անդրկովկասի խիստ աչքի ընկնող ազգարային բնույթը մինչև հեղափոխությունը: Անդրկովկասի ինդուստրիալ զարգա-ցումը խորհ.-իշխանության որոք:

Ներկի, քարածուխի արդյունաբերության զարգացումը, պղնձի, մարգանեցի, յերկաթի, շինարարական քարի արդյունա-հանույթը: Մշակող արդյունաբերության զարգացումը: Մանվա-ծային (տեքստիլ), քիմիական արդյունաբերությունը և պյուղա-տնտեսական արդյունքների վերամշակումը: Ելեքտրոշինարարու-թյուն: Գյուղատնտեսության զարգացումը տեխնիկական կուլ-տուրաների ուղղությամբ՝ ինտենսիվիկացման, ջրաբաշման և կոլիկատիվացման հիմունքների վրա:

Հաղորդակցության ճանապարհները: Քաղաքները: Անդրկով-կասի հնգամյակի իրականացումը և նրա զարգացման հեռա-նկարները:

գ. Ուկրայինայի ԽՍՀ վորպես ԽՍՀՄ ժող.-տնտեսության, ինդուստրացման առաջին ածխամետաղագործության բազա: Տեր-ըիտորիան և ազգաբնակությունը: Աղիստավոր մասսաների կրած ճնշումը Ուկրայինայում ցարիզմի որոք: Ազգային կուլ-տուրական շինարարության և տնտեսական զարգացման նվա-ճումները Ուկրայինայում խորհ.-իշխանության որոք: Աշխատա-վորության վիճակը Արեմտյան Ուկրայինայում – «Պանական լե-հաստանի ճնշման տակ»:

Զոնալ գիրքը – անտառատափաստան և տափաստան: Ժողո-վրդական տնտեսության նպաստող բնական պայմանները՝ տաք կլիմա, ծովի մերձավորություն, սեահող, քարածուխի և յերկաթի խոշոր շերտեր:

Ազգաքնակության մեծ խտությունը: Ուկրայինայի ժողո-վրդական տնտեսության մինչպատերազմյան կառուցվածքը՝ ազրարային գյուղատնտեսությամբ, ինտենսիվ և ինդուստրաց-ան հնարավորություններով հարուստ, բայց քիչ ոգտագործված յերկիր: Բնական և տնտեսական, հնարավորությունների տեսա-կետից յերկու հիմնական մասի բաժանումը՝ Հյուսիս-արեմտյան և Հարավային:

Կլիմայական և բուսահողային բարենպաստ պայմանները՝ Հյուսիս-արևմուտքում գյուղատնտեսության զարգացման համար և այս մասի հարժար դիրքն արտասահմանյան շուկայի նկատմամբ: Շաքարածակնդեղի կուլտուրայի նշանակությունը: Ցորեն: Նոր կուլտուրաներ՝ սոյա, կենաֆ, բամբակ (հարավային մասում): Անասնաբուծություն: Կոլլեկտիվացման բարձր տեմպերը: Խորտըն-տեսություններ: Գյուղատնտեսության բարձր տեխնիկան – հողի տրաքտորային մշակումը և բազմադաշտյան սիստեմ: Ֆասֆորիտի, գորշ ածուխի և տորֆի հանքեր: Ֆաբրիկա-գործարանային ար-դյունաբերության բնույթը՝ գյուղատնտեսության արդյուքների մշակումը. շաքարագործություն, գինեգործություն, ալրադա-ցություն:

Հանք-արդյունաբերական հարավը: Ռայոնի տնտեսական նշանակության հիմունքները: 1) Դոնբասի քարածուխը. 2) Կրի-վոյ-Ռոգի և Կրկչի յերկաթահանքը: 3) Մետաղագործությունը Դոնբասում և նրա ճանապարհներին: 4) Մեքենայակառուցումը (Դնեպրոպետրովսկ, Խարկով, Նիկոլայեվ, Դոնբաս): Եկրկրուգա-կան նշանակություն ունեցող ճյուղերը՝ մարդանեց, սոդիկ, աղ: Քիմիական արդյունաբերություն: Ապակու և կերամիքային ար-դյունաբերություն:

Հարավի գյուղատնտեսությունը: Ճյուղերը՝ հատիկային կուլտուրաներ, արևածաղիկ, բախչաներ: Ուկրայինայի ԽՍՀ գը-խավոր բնակավայրերը: Նավահանգիստներ:

Ուկ. ԽՍՀ տնտեսական շինարարությունը հնգամյա պլանի համաձայն և զարգացման հեռանկարներ՝ մետաղագործական և մեքենայագործական ծանր արդյունաբերության ընդլայնումը: Քարածուխի արդյունահանության մեքենայացումը և յերկաթա-հանքի արդյունահանությունն ու վերամշակումը ելեքտրիֆիկա-ցիայի հիման վրա: Ելեքտրոկայանների ցանցի ընդլայնումը: Դնեպրոստրոյի նշանակությունը: Տրանսպորտի զարգացումը: Ծանր ինդուստրիայի գիգանտների կառուցումը: Դնեպրյան ար-դյունաբերության կոմբինատը:

Ինտեսիվ կուլտուրաների զարգացումը և նրանց արդյունա-բերական վերամշակումը:

Ուկ. ԽՍՀ հնանակությունը ԽՍՀՄ ժողովրդական տնտեսու-թյան մեջ:

Ուկ. ԽՍՀ ծայրամասային գիրքը. ԽՍՀՄ պաշտամության խնդիրը:

Մոլդավա—Բեսարաբիա, նրա բռնագրավումը Ռումանիայի կողմից հակառակ Բեսարաբիայի աշխատավոր մասսաների կամքին:

Դրիմի ԽՍՀ համառոտ բնութագիրը: Գյուղատնտեսությունը, հացահատիկային մշակույթը հյուսւրային մասում, յնթարևադային կուլտուրաներ և մրգեր՝ հարավային մասում:

Դրիմի նշանակությունը վորպես ԽՍՀՄ կուրորտ:

Արդյունաբերության զարգացման հեռանկարները: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հաջողությունները:

Դ) ԽՍՖԽՀ:—Տերրիտորիան: Բնակչությունը: Տեսակարաբեկությունը: ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ:

Երջաններն ըստ Պետպանի.

1) Մոսկվայի շրջանը վորպես ԽՍՀՄ ժողութեասության տեխնիկական սպառողինման հիմնական բազաներից մեկը: Բնությունը, սահմանները, դիրքը: Ներքին զանազանությունները՝ չյուսիսային զոնա—տայգային, ծովային լանջափող. շատ հարուստ անտառներով, գետերով, լճերով և ձահիճներով: Միջին մասը՝ ծածկված խառն անտառներով, աննշան բլուրներով: Հարավային մասը՝ ծածկված լայնատերև անտառներով և անտառափաստաններով, տաք կլիմայով և սեահողային բուսահողեր: Զոնաների տնտեսական տարբերությունները: Միջին զոնան իրում ավելի ինդուստրիալ և քաղաքային: Տեքստիլ արդյունաբերություն, նրա գերազող դերը սինչև վերակառուցման շրջանը:

Բիմիական, կենսամթերքային, պոլիգրաֆիկ և մեքենայաշնարարական արդյունաբերությունը և այլ տեսակները:

Գյուղատնտեսության գերակշռումը—հյուսիսային և հարավային զոնաներում: Տուլայի արդյունաբերական ռայոնը:

Տեղական հանածո հարստությունների սակավությունը Մոսկվայի շրջանում: Եներգետիկ միջոցները: Երեքտրիֆիկացիա:

Գյուղատնտեսության ուղղությունը Մոսկվայի շրջանում: բանջարաբություն, խոտամշակում, կաթնատնտեսական անասնաբություն, խոտարություն, թաշնաբություն. աեխմիկական կուլտուրաներ—կտավհատ, վուշ, հատիկային կուլտուրաներ (հարավային զոնա): Գյուղատնտեսության բարձր ինդուստրիկացիան: Գյուղատնտեսության կոլլեկտիվացման հաջությունները:

Այս շրջանի նշանակությունը ԽՍՀՄ ժող. տնտեսության մեջ: Երջանի կենտրոնական դիրքի նշանակությունը: Մոսկվան վորպես Միության կուլտուրական և տնտեսական կենտրոն և հաշխարհային նեղափոխության կենտրոն: Քաղաքները: Հաղորդակցության ճանապարհները, Մոսկվայի շրջանի նշանային երականացումը և աշխանի զարգացման հեռանկարները: Եներգե-

տիկ բաղայի ուժեղացումը: Փոխակերպումը—տեքստիլ-մեքենակառուցողականից մեքենակառուցողական տեքստիլայինի: Գյուղատնտեսության զարգացումը տեխնիկական կուլտուրաների, բանջարաբուծության և պրոդուկտիվ անասնաբուծության հիմանվառակը:

2. Իվանովի արդյունաբերական շրջան: Սահմանները, բնությունը, գիրքը: Ոկա և Վոլգա գետերի միջև գտնվելու նշանակությունը: Երջանի արդյունաբերության ծագման և զարգացման պատմությունը: Տեքստիլ արդյունաբերությունը վորպես հիմնական մասնագիտացում: Իվանով-Վաղնեսոնովկը վորպես շրջանի զվարակություն, մուս քաղաքները: Տորֆն իրեն ելեքտրիֆիկացիայի բազա: Ֆուֆորիտները: Տնայնագործական արդյունաբերություն: Գյուղատնտեսության ուղղությունը—կաթնատնտեսական անասնաբուծություն, վուշ, կարտոֆիլ: Գյուղատնտեսության կոլլեկտիվացումը: Փայտագործություն:

Իվանովի արդյունաբերական շրջանի նշանակությունը ԽՍՀՄ ժողութեասության մեջ:

Իվանովի արդյունաբերական շրջանի հնգամյակի իրակացումը և զարգացման հեռանկարները: Բամբակեղենների, վուշի գործվածքների նոր Փաբրիկաներ:

Մելանժի կոմբինատ: Տեքստիլ արդյունաբերության սպասարկող արտադրությունների զարգացումը: Ինտենսիվ կուլտուրաների ցանքսային տարածությունների ընդլայնումը: Վուշի խորանտեսություններ: Գյուղատնտեսության ինդուստրացումը: Նոր յերկաթուղիներ (կապը Մոսկվայի շրջանի և չյուսիսային յերկրի հետ): Երջանի փոխարկումը միակողմանի զարգացած տեքստիլուայոնից արդյունաբերական կոմբինատի:

3. Նիժեգորոդի շրջան: Դիրքը, սահմանները: Անտառները: Յրկաթահանքերի և գորակյալ վառելանյութի պակասը: Տորֆ և ֆոսֆորիտները: Նիժեգորոդի և Մուրոմի արդյունաբերական շրջանները: Մետաղատրդյունաբերություն և նրա համամիութենական նշանակությունը: (Վոլգյան տրանսպորտի սպասարկումը): Տնայնագործական արդյունաբերություն (Պալլովո): Փայտի արտահանությունը:

Գյուղատնտեսության ուղղությունը: խոտացանքս և կաթնատեսական արդյունաբերություն: Կոլտնտեսություններ և խորտնտեսություններ:

Հնգամյակի իրականացումը և հեռանկարները: Մետաղագործական արդյունաբերության ընդլայնումը—Սորմովի գործարանի վերակառուցումը և ավտոգործարանի կառուցումը:

Փայտամշակության արդյունաբերության ընդլայնումը:  
Քյուղատնտեսության ինտենսիվացումը: Կոլեկտիվացման գար-  
գացումը:

Վուշի և անասնաբուծական խորտնտեսություններ: Յերկա-  
թուղիների շինարարություն:

4. Լենինգրադի շրջանը փորպես ԽՍՀՄ ժող. տնտեսության  
տեխնիկական սպառազինման հիմնական բազաներից մեկը: Կարե-  
լյան ավտոնոմ հանրապետություն: Շրջանի աշխարհագրական  
դիրքը և նրա նշանակությունն արտաքին առևտրի համար: Շրջանի  
դիրքը պաշտպանության տեսակետից: Շրջանի բաղկացուցիչ մա-  
սերը՝ Կոլայի թերակղին: Կարելի և հարավյան լճային շրջան: Ամեն  
մի մասի բնական առանձնահատկությունները: Շրջանի  
հիմնական մասնագիտացումը՝ արտաքին առևտուր և մշակող ար-  
դյունաբերություն: Քարածութիւն և նավթի բացակայությունը:  
Անտառային հարստություններ: Հիդրո-էներգետիկական միջոց-  
ներ: Լենինգրադի արդյունաբերական նշանակությունը: Ֆաբ.  
գործարդյունաբերության կազմը: Մետաղագործական, քիմիական,  
տեքստիլ, թղթի արդյունաբերությունը փորպես ճյուղեր: Անտա-  
ռային տնտեսություն: Փայտի եքսպորտ և փայտամշակման ար-  
դյունաբերություն: Ճկնարդյունաբերություն: Ելեկտրո-կայաններ  
(Վլխով, Սվիր):

Յերկրագործության համար աննպաստ պայմաններ: Շրջա-  
նի գյուղատնտեսության ուղղությունը — անասնաբուծություն,  
խոտացանքս, վուշ: Գյուղական տնտեսության կոլեկտիվացումը:  
Քաղաքներ: Նավահանգիստներ: Յերկաթուղիներ: Մարինյան  
ջրային սիստեմը:

Լենինգրադի շրջանի նշանակությունը ԽՍՀՄ ժողովրդական  
տնտեսության մեջ: Լենինգրադի նշանակությունը Հոկտեմբերյան  
հեղափոխության մեջ և ներկայում փորպես քաղաքական, կուլ-  
տուրական կենտրոն: Շինարարություն հնգամյա պլանի համա-  
ձայն՝ հիդրո-կայանների կառուցումը, նոր մետաղագործարան-  
ներ, կաթնատնտեսական անասնաբուծության զարգացումը ա-  
նասունների կերի տարածությունների ընդլայնման հիման վրա:  
Մուրմանի նավահանգստի կանավորումը. Ճկնարդյունաբերության  
ապահովումը—նավատորմիջով, փայտարդյունաբերության զար-  
գացումը. ապատիտների և այլ հանածոների արդյունահանու-  
թյան զարգացումը:

5. Հյուսիսային կովկասյան շրջան: Կովկասյան լեռնաշղո-  
թան և նախակովկաս: Յերկրի բնության և բնակչության բազ-  
մապիտությունը: Աղբային կազմը: Լեռնային ժողովրդների

վիճակը ցարիզմի ժամանակ: Աղդային խնդրի լուծումը Խորհրդ-  
իշխանության որոք: Շրջանի վարչական բաժանումը: Գյուղա-  
տնտեսություն, հատիկային կուլտուրաներ, տեխնիկական կուլ-  
տուրաներ (ծխախոտ, սոյա, կենափ): Այգեգործություն, անաս-  
նաբուծություն, Խորտնտեսություններ: և կոլտնտեսություններ:

Շրջանի համատարած կոլեկտիվացումը, Լեռնային արդյու-  
նաբերություն (նավթ, քարածուխ, գունավոր մետաղներ): Մշակ-  
ավող արդյունաբերություն (գյուղատնտեսական հումույթի մշա-  
վող արդյունաբերուցումը և այլն): Ինդուստրացման հնարավո-  
կումը, մեքենակառուցումը և այլն): Հարուստ հիգրոբներգետիկ միջոցները: Ելեկտրո-  
րությունները: Հարուստ հիգրոբներգետիկ միջոցները: Ելեկտրո-  
րությունները: Արդյունաբերական կենտրոնները: Եքսպորտ: Նավա-  
կայանները: Աղբյունաբերական կենտրոնները: Երկրի դիրքի նշանակությունը ԽՍՀՄ  
հանգիստները: Կուրորտները: Յերկրի դիրքի նշանակությունը ԽՍՀՄ  
պաշտպանության տեսակետից:

Հնգամյակի իրականացումը և հեռանկարները՝ վառելանյու-  
թի, մետաղագործական և սննդամթերքների արդյունաբերության  
թնդայնումը: Գյուղատնտեսական մեքենաների կառուցումը (սել-  
լունդայնումը): Քիմիական արդյունաբերության զարգացումը: Ելեկ-  
տրամշատրոյի: Քիմիական կուլտուրաների և անասնաբուծու-  
թյան զարգացումը: Շինոնիկական կուլտուրաների և անասնաբուծու-  
թյան զարգացումը: Շրջանի փոխակերպումը ինդուստրիալ-ագ-  
րարայինի:

6. Ուրալի շրջան: Բնությունը ու բնակչությունը: Հանա-  
ծոների հարստությունները և նրանց մշակումը (յերկաթ, պղինձ,  
պոսկի, պլատին, թանգարժեք քարեր, քարածուխ, նավթ): Հան-  
գոսկի, թանգարժեք քարերի արդյունաբերություն: Ուրալի արդյունաբե-  
րագործարանային արդյունաբերություն: Ուրալի արդյունաբե-  
րության հետամնացության պատճառները: Անտառային տնտե-  
սություն, հողագործություն, անասնաբուծություն. Գյուղատն-  
տեսության կուլեկտիվացումը: Արդյունաբերական կենտրոններ:  
Հաղորդակցության ճանապարհներ:

Բաշկիրայի ինքնավար ԽՍՀ-նը բնակչությունը և  
անտեսությունը:

Ուրալի շրջանի նշանակությունը ԽՍՀՄ տնտեսության մեջ  
Հնգամյակի իրականացումը և զարգացման հեռանկարները  
Միության մեջ յերկրորդ մետաղա-ածուխային բազայի ստեղ-  
ծումը (Ուրալ-Կուզբաս): Հին գործարանների վերասարքավորումը  
և նոր մետաղագործական հոկանների (գիգանտների) կառուցումը  
(Մագնիտոգորսկի, Տագիլյան, Բակալյան): Մեքենաշինարարու-  
թյան զարգացումը: Քիմիական արդյունաբերության զարգացումը  
Ուրալի ելեկտրիֆիկացիան: Յերկաթուղային շինարարությունը:  
Ուրալը վորպես սև մետաղագործության և մեքենաշինարարու-

թյան միջին բազա: Ուրալի արդյունաբերության նշանակությունը ԽՍՀՄ պաշտպանության համար:

7. Սիրիի և Յակուտների ինքնավար ԽՍՀ: Սիրիի կազմը՝ տարածությունը՝ բնությունը և բնակչությունը: Զարգացման հարուստ տվյալները: Տնտեսական հետամնացություն պատճառները: Դյուղատնեսություն: Խորտակներություններ: Անտառային արդյունաբերություն. վորսորդություն: Զկնորսություն: Հնգամյակը և զարգացման հեռանկարները: Կուգրաս: Նովոսիրիի կոմրայնի գործարանը: Վուկու, պլատինի, կապարի արդյունահանություն: Ելեքտրիֆիկացիան: Անդարսարոյ:

Հաղորդակցության ճանապարհներ: Քաղաքներ: Հյուսիսային ծանապարհը: Սիրիի նշանակությունը Սիրիան համար:

Յակուտական ինքնավար ԽՍՀ համառոտ բնութագիրը. Նրա տնտեսական նշանակությունը (վուկի, մորթի): Զարգացման հեռանկարները:

8. Հեռավոր Արևելք: Նոր ազգաբնակություն: Անտառային հարստություններ: Հողագործություն (բրինձ և ուրիշ կուլտուրաներ): Զկնորսություն և վորսորդություն: Հանածոներ և լեռնային արդյունաբերություն (քարածոխ, նավթ, վոսկի, արճիճ): Զին-Երևելյան յերկաթուղագիծը: Վաղիվաստոկի նշանակությունը: Շրջանի հնգամյա պլանը: Հեռավոր Արևելքի շրջանի նշանակությունը ԽՍՀՄ պաշտպանության համար:

Ծանոթություն: ԽՍՖԽՀ մնացած ույունները համառոտ ուսումնասիրվում են քարտեզով, վորքան թույլ և տալիս ժամանակը:

9. Բելորուսիա. Բնական պայմանները, ազգային կազմը: Ցարիզմի քաղաքականությունը բելորուսների և հրեաների վերաբերմամբ: Բելորուսիայի հողագործական բնույթը: Արդյունաբերության զարգացումը: Աշխատավորության վիճակը խորհրդային բելորուսիայում և Արևմտյան Բելորուսիայում, վոր գտնվում և լեհաստանի ճնշման տակ: Բելորուսիայի նշանակությունը վորպես պատերազմական գործողությունների հնարավոր ուազմարեմ: Հնգամյակը և զարգացման հեռանկարները:

10. Միջին Ասիական հանրապետություններ (Թուրքիաստան): Աշխարհագրական դիրքը. կազմը: Անապատների շրջանները և նրանց բնական առանձնահատկությունները: Բնակչությունը: Միջին Ասիայի գաղութային անցյալը: Տնտեսության և կուլտուրայի գերելքը խորհրդային իշխանության որոք: Կանանց աղաւագրումը:

Գյուղատնտեսություն՝ բամբակ, մետաքսագործություն, այգեգործություն, խաղողաբուծություն, վոչխարաբուծություն (կարտկուլ): Իրրիգացիա: Գյուղատնտեսության կոլլեկտիվացումը: Ողտակար հանածոններ (գլաուբերյան աղ, ուղի, ուրանիոն, բարչիտ, վոսկու և պղնձի հանքեր):

Տեքստիլ արդյունաբերության զարգացման հեռանկարները տեղական բամբակի հիման վրա: Թուրքսիր: Հաղորդակցության ճանապարհները: Միջին-Ասիական հանրապետությունների համակառությունը ԽՍՀՄ պաշտպանության համար:

### ՅԵԶՐԱՓԱԿՈՂ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԽՍՀՄ ԺՈՂՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Գլխավոր հանածոնների վայրերի գլխավոր ույունները: Արդյունաբերական գլխավոր ույուններ: Գյուղատնտեսական գլխավոր ույուններ (ցորենի շերտ, սպառողական շերտ, տեխնիկական կուլտուրաների ույուններ): Անտառային ույուններ: Հաղորդակցության գլխավոր հանապարհներ. յերկաթուղիներ, խճուղիներ, ջրաշաղան և կուլտուրաշաղան հանապարհներ: Վարչական, տնտեսական և կուլտուրաշաղան կենտրոններ և նավահանգիստներ: ԽՍՀՄ ժողովական գլխավոր կենտրոններ և նվազամյակները: Նվազամյամները վրդական տնտեսության I և II համամյակները: Նվազամյամները ժողովրդական անտեսության սոցիալիստական վերակառուցման ժողովրդական անմագերը: 518 փարբիկա-գործարանների շրջանում: Զարգացման տեմպերը: 518 փարբիկա-գործարանների և 1040 մեքենա-տրաքտորային կայանների կառուցումը: ԽՍՀՄ վորպես ազգությունների գորեղ միություն և վորպես հենարան համաշխարհային սոցիալիստական հեղափոխության:

### ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐՈՒՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Աշխարհագրական պայմանները, — զոնալ և ազոնալ (Փակտորները և նրանցով պայմանավորող աշխատանքի համաշխարհային աշխարհագրական բաժանումը):

2. Հացի, անսանապահության, քարածուխի, նավթի, հանգիւթեական պահության տակ: Կարևորագույն տեսակների գըլքերի, բամբակի և հումքի ուրիշ կարևորագույն տեսակների գըլքավոր ույունները:

3. Խնդուստիւլ և ազգարային յերկրներ: Համաշխարհային փոխանակություն և հաղորդակցության ճանապարհներ:

4. ԽՍՀՄ և կապիտալիստական աշխարհը: Կապիտալիստական և սոցիալիստական յերկու սիստեմների պայքարը: Կապիտալիստական սիստեմի տակի աշխատական սիստեմի քայլքայումը: Սոցիալիստական սիստեմի առավելությունները: Կապիտալիստական անտեսության խոցերը, առավելությունները:

նրա անլուծելի հակասությունները և անխուսափելի կործանումը՝  
ԽՍՀՄ սոցիալիստական տնտեսության վերելքը, զարգաց-  
ման բուռն տեսպերը, բարգավաճման և բնական միջոցների մաք-  
սիմալ ոգտագործման հեռանկարները:

ԽՍՀՄ մասնակցությունը համաշխարհային տնտեսության  
մեջ:

ԽՍՀՄ արտոհանման և ներմուծման կաղմը:

ԽՍՀՄ տնտեսական անկախությունը ինդուստրացման մի-  
ջոցով և հումույթային բազայի ընդլայնումը: Պայքար՝ բամբակի-  
անկախության համար:

ԽՍՀՄ հնգամյակը—հարգած կապիտալիզմին:

ԽՍՀՄ հնգամյա պլանի իրականացումը չորս տարում:

Յերկրի պաշտպանության ամրապնդումը:

Շինարարության յերկրորդ հնգամյակ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Բացատրական խոսք	3
Հինգերորդ խումբ	15
Վեցերորդ խումբ	
ա) Բարձր զարգացած կապիտալիզմի յերկրներ	23
բ) Գաղութային, կիսազարութային և կախման մեջ զանգող յեր- կրներ	35
գ) Կապիտալիզմի միջին մակարդակի զարգացման յերկրներ	43
դ) Վոչ կապիտալիստական զարգացման ուղղով ընթացող յերկրներ	48
Տոթերորդ խումբ	
Խորհրդային Միություն	50
Վրաստանի ՍԽՀ	51
ՎՍԽՀ դաշնակց հանրապետություններն Անդրկովկասում	55
ԽՍՀ Միություն մեջ	56



Հայաստանի Ազգային գրադարան



NL0423063

20402

8009

